№№ 6—7 (184) XVII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ—ՅՈՒԼԻՍ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Այս համարը բաղկացած է Բաանիչորս Երեսից

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՅԱՍՈՒՄՆ

Համիդեան կառավարութիւնը, այնքա՞ն հետամուտ Հայ յեղափոխութեան իւրաքանչիւր քայլին և խօսքին, չէր կարող, հարկաւ, առանց „լուրջ" ուշադրութեան թողնել Դաշնակցութեան Զորրորդ Կուսակցաժողովի որոշումներն և կարգադրութիւնները։

Դեռ աւստրիական մայրաքաղաքում, երբ շարունակւում էին ժողովի պարապմունքները, հանդէս եկան Համիդի հանրածանօթ գործակալ-լրտեսները, տեսնելու այն՝ որ անտեսանելի է, և հաղորդելու այն, որ անլսելի է։ Բարեբախտաբար Վիեննայի կառավարութիւնը, գէթ բացառութեան համար, կարևորութիւն չը տուեց Միւնիրբէյական ստոր տիպերին և խնդիրը հրապարակական կերպարանք չ՝առաւ։

Բայց այժմ, երբ մեր պաշտօնական օրգանի միջոցով արդէն լոյս են տեսել Ընդհանուր Ժողովի որոշումները, կամ աւելի ճիշտ՝ նրանց մի մասը, Աբդիւլ-Համիդի ապարանքը—միակ և բարձրագոյն կառավարութիւնը պետութեան մէջ—շտապեց, նրան յատուկ անտակտութեամբ, իր յօնքերը կիտել և դժգոհութեան ցոյցեր անել։

Դժգոհութեան պատճառը այս անգամ տարբեր է և նշանակալից.—նա ուղղուած է այժմ ոչ թէ սահմանը անցնող հայդուկային խմբերի կամ զինման ու զինուած դիմադրութեան դէմ, այլ այն փաստի դէմ, որ Դաշնակցութիւնը վճռել է իր ձեռքի մէջ միացած պահել Թիւրքահայ և կովկասահայ դատը, և դրա հետ միասին ըէէլ գործակցութիւն և համերաշխութիւն հաստատել Թիւրք և քիւրդ տարրերի հետ, ընդդէմ ընդհանուր Թշնամու—տիրող անարգ ըէժիմի։

„Բարձրագոյն դուռը—ասում է կ. Պոլսից տրուած հեռագիրը—շատ զայրացած է Ժընեվի Հայկական կազմակերպութեան որոշումների դէմ, մանաւանդ այն որոշման, որով ժողովը՝ մի կողմ Թողնելով Մեծ-Հայաստանի գաղափարը, ընդունել է միացած պահել Թիւրքահայերի և կովկասահայերի հարցը, և համերաշխ գործակցութիւն առաջ բերել Թիւրքերի և քիւրդերի հետ՝ ըէֆորմների գործադրութեան համար"։

Իրաւունք ունի ծիրանակիր ոճրագործը։ Երեսուն տարուց աւելի է, ինչ նա անհաշտ թշնամութեան սերմ է ցանում օսմանեան պետութիւնը կազմող բոլոր ազգերի միջև, երեսուն տարի է, որ նա դժոխային դաւերով, կարողանում է խաբել, յիմարացնել իր հպատակ ազգերը, մէկի ձեռքով միւսի արիւնը թափել, մէկի դաշոյնով միւսի կուրծքը պատառել և տանել բոլորին, թէ սպանող և թէ սպանուող, դէպի ընդհանուր քայքայումն, անկում ու աղքատութիւն։

Եւ այժմ ահա, այսքա՞ն տարիների ջանքերից և յեղափոխական պրոպագանդից յետոյ, յաջողւում է պատռել ժողովուրդը կուրացնող շղարշը, լսելի դարձնել խելացիութեան կոչը, ցոյց տալ ց՝այժմ հայի դէմ կանգնած Թիւրքերին ու քիւրդերին իրենց սպանիչ միամտութեան արդիւնքը, և ուրեմն քանդել այն պատուանդանը, որի վրայ կռթնած է սուլթանական ըէժիմը, այն գլխաւոր և գուցէ միակ յենարանը,—ազգերի փոխադարձ հակամարտութիւնը—որի վրայ էր դրել Համիդեան իշխանութիւնը իր արիւնոտ գայիսօնը... Համիդ տեսնում է այդ, զգում է այդ և նրա ցասումը Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի որոշման դէմ պիտի նկատւի „շատ բնական և շատ հետևողական", այն ընդհանուր քաղաքականութեան մէջ, որը կազմել է նրա կառավարութեան ոգին ու ծուծը։ Սրանից յետոյ էլ, ինչպէս ցոյց են տալիս Մուշի վերջին դէպքերը, նա կը շարունակէ կուռեցնել, միմեանց դէմ դուրս բերել ազգերը, ոտի կանգնեցնել մահմեդական կոյր մասսաները,—սակայն դրանք են և կը մնան իբրև նրա ոճրամիտ ձեռնարկների վերջին արտայայտութիւնները, նրա յուսահատ ցասման վերջին ծերպերը...

Այդ օրինակ անմիտ ցասումները, նոյնիսկ օգոստափառ, անկարող պիտի լինեն մոգաչափ անգամ վնասելու կուսակցութեան գործելակերպին։—Ընդհակառակը, մեր թշնամու այդ քաղաքական գալարումը նոր և զօրեղ նշան է, որ մարտի և պատրաստութեան նորագոյն գործելակերպը աւելի քան կենսունակ է, խրփում է թշնամու կրծքին, և ուրեմն հարուածը պիտի լինի վճռական և մահացու։

Այդ հարուածի ուժգնութեան համար է նոյնպէս, որ կուսակցութիւնը, անսովոր ջանքերի գնով, վճռեց իր ձեռքի մէջ կենդրոնացնել հայութեան երկու խոշոր հատուածների դատը, սահմանի այս և այն կողմը, և միացած ոյժով,—բայց ոչ, ի հարկէ, Մեծ-Հայաստան ստեղ-

ծելու տենչով—ինչպէս և այլազան տարրերի համերաշխ գործունէութեամբ՝ առաջնորդել յեղափոխական տարագային բանակը դէպի այն մ ի ջ ն ա բ ե ր դ ե ր ը, ուր պաշարած են բռնապետութեան երկու խոշորագոյն ներկայացուցիչները։

Ոյժերի այդ ներդաշնակ համախմբումը, բնական է շատ, հաճելի չէ ոչ սուլթանական և ոչ էլ ցարական մտածողութեան, բայց նա հաճելի է և շահաւէտ սարուկ ժողովուրդների ազատութեան—ու այդպէս էլ կը լինի։ Երկու թագակիր-ոճրագործները թող շարունակեն աւելի բարձրացնել ժողովուրդները բաժանող թումբերը—մենք կը շարունակենք քանդել ու վերացնել այդ թումբերը։

Տեսնենք՝ ով կը լինի յաղթողը։

ՀԱՅ—ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

Երէկ նա ցնորք էր, այսօր՝ սփոփիչ հ ն ա ր ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն, վաղը նա կը լինի բուն, կենդանի ի ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն։

Ցնո՞ր ք... Այդպէս էր թւում մեր յեղափոխական գործիչներից շատ շատերին, ոչ միայն սրանից 20—30 տարի առաջ, այլ նոյնիսկ յետոյ, մ ա ն ա ւ ա ն դ յ ե տ ո յ... Իրականութիւնը շատ էր խեղդող և հայ գործիչները դժուար կարող էին ընդնշմարել իրենց պայքարի գալոց օրերում համամարդկային գաղափարների յաղթանակը,—մի միջավայրում, որ պատկերանում էր նրանց ճառերի մէջ, նրանց գրչի տակ, իբրև մի վիթխարի և անդարմանելի գազանանոց։

„Ակն ընդ ական“ Թիւրքաց-Հայաստանում թւում էր յաւիտենական, ճակատագրական։ Սակայն գ ի տ ա կ ի ց յեղափոխական միտքը, որին վիճակւած է ամեն տեղ և ամեն ժամանակ ըմբոստանալ ու խորտակել այդ զարհուրելի ֆատալիզմը, այդ կոյր ու բութ ճակատագրականութիւնը,—այնտեղ ևս, Թիւրքաց-Հայաստանում, վաղաժամ մտաւ իր դերի մէջ։

Հայ յեղափոխական-սօցիալիստական միտքն էր այն՝ որ առաջին անգամը այդ մռայլ Բաբելոնում հնչեցրեց ժողովուրդների համերաշխութեան նշանաբանը։ Երկար տարիների ընթացքում տարածւում էր նա մեր օրգանների, թռուցիկների, մեր պրոպագանդիստների ու ռազմիկների միջոցով, տարածւում էր յուսահատական դանդաղկոտութեամբ, հանդիպելով ամեն քայլափոխում իներտ, անսասան ապառաժների... Մի-մի անհատներ կարողացանք գրաւել մեր հարևան մահմեդականներից, որոնք իբրև գալոց ընդհանուր եղբայրակցութեան կարապետներ, անցան մեր շարքերը, դարձան հաւատարիմ սպասաւորներ Հ. Յ. Դաշնակցութեան, որպէս ռազմիկ, զէնք փոխադրող, կամ պարզ վաչադ...

Մի մի անհատներ միա՞յն... Ահագին մասսան—քիւրդ և տաճիկ—շարունակում էր համակւած մնալ անհաշտ ու անկեղծ թշնամութեամբ դէպի հայ ժողովուրդը, նրա պայքարը, նրա արիւնոտ դատը։

Երկու ուժեր, երկու առերևոյթս հակամարտ գործօններ՝ եռանդով արծարծում էին այդ ցեղական թշնամութեան կրակը։ Սուլթանի կառավարութիւնը՝ մի կողմից, „Երիտասարդ Թիւրքիան միւս կողմից։ Մէկի ընթացքը՝ բնական ու ըմբռնելի, միւսինը տխուր ու վհատեցուցիչ։

Չենք մոռացել „Թիւրք ազատարար կուսակցութեան“, նրա շէֆերի բռնած դիրքը դեռ հայկական շարժման սկզբներում։ Մենք, որ սրտանց ծափահարում էինք այդ կուսակցութեան ամեն մի ըմբոստ յայտարարութիւնը սուլթանական ռէժիմի դէմ,—մեզ ամեն քայլափոխում դառնացնում էին, հիասթափեցնում։ Մի Մուրադ-բէյ, մի կրթւած ու իրազեկ մարդ, որ համարւում էր „Երիտասարդ Թիւրքիայի“ միահեծան գլուխ՝ մի գեղեցիկ օր Ֆրանսերէն լեզուով բրօշիւրի մէջ յայտարարում էր Եւրոպային իր կուսակցութեան անունից, թէ հայ յեղափոխականները պարզ, վուլգար աւազակներ են, ոճրագործներ, որոնց գործը միշտ մահմեդական ժ ո ղ ո վ ո ւ ր դ ն ե ր ի հետ է և որոնք նպատակ են դրել կոտորել նրանց... Իսկ Մուրադ-բէյի հաւատարիմ յաջորդները—Ռիզա-բէյ, Օտտոմանուս և այլն—նոյն Եւրոպայի առջև ի ցոյց դրին հայ յեղափոխականներին, իբրև ռուս կառավարութեան վարձկանների...

Մի դաւաճան ընթացք, որի անհաշիւ ու դժբախտ հետևանքներից մինն էլ այն եղաւ, որ հայ ռազմիկների մէջ խոր արմատ ձգեց ս կ է պ տ ո ւ թ ի ւ ն ը, թերահաւատութիւնը դէպի մահմեդական և մասնաւորապէս տաճիկ գիտակից տարրերը։

Անէծքի՜ արժանի անցեալ... Թւում էր թէ սահման չը կայ ոչ մահմեդական ժողովրդի հլու ստրկութեան, ոչ նրան խեղդող խաւարին, ոչ էլ նրա թշնամութեան՝ դէպի հայ պարիա ժողովուրդը։

Բայց ահա „ներկան“ տարբեր անցեալից։ Ահա մասսային սթափման նշաններ, համերաշխութեան և եղբայրութեան անկեղծ ձայներ, որ հնչում են թիւրք բողոքող տարրերի մէջ, ըմբոստացման մի կազդուրիչ շրջանում։ Պատմութիւնը իր գեղեցիկ „սիւրպրիզներն“ ունի. ահա կատարւում է մի բեղուն, ստեղծագործող աշխատանք նոյնիսկ այդ իներտ զանգւածների մէջ, որ երէկ թւում էին դատապարտւած յաւիտենական անշարժութեան, և որ այսօր ցոյց են տալիս արդէն մի լաւ ապագայի գրաւականներ։ Մի նոր արիւն է սկըսում հոսել մահմեդական երակների մէջ, մի թարմ սերունդ է կարծես բարձրանում անշարժութեան ու մեղկ ստրկութեան արգանդից, միանգամայն տարբեր

այն միւս սերնդից, որ երէկ „Երիտասարդ Թիւրքիայի“ փայլուն ու հրապուրիչ անուան տակ՝ ապարդիւն մաշում էր իր կեանքը թղթային ռմբակոծումներով, Եւրոպային միամիտ կոչ-յորդորներ ուղղելով։ Նա ներշնչւում է նոր լօզունգներով, նա կոչ է անում ինքնօգնութեան մեծ „սկզբունքին“... Ցանկա՞նք, որ սխալուած չը լինենք մեր գուշակութիւնների մէջ։ Ցանկանք, որ Ճակատագիրը խնայէ, վերջապէս, մեր տարաբախտ ժողովուրդներին, մեր ընդհանուր արիւնաներկ հայրենիքը, որ վաղուց ի վեր կարօտում է միահամուռ կուլտուրական աշխատանքի։ Պոկե՞նք մեր սրտերից նախապաշարմունքի վերջին մնացորդները, սիրով ձեռք տանք մեր արթնացող հարևաններին, աւելի ևս պինդ գրկենք համերաշխութեան աւետարանը, որ քարոզել ենք 17 տարուց ի վեր և դարձնենք հայ-մահմեդական գործակցութիւնը մեր շարժման անհրաժեշտ նշանաբան։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

—

Լահէյի խորհրդաժողովի առիթով, „Դրօշակի“ խմբագրութիւնը ուղղեց Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններից՝ անգլիական, ֆրանսիական և իտալական արտաքին գործերի մինիստրութիւններին, ինչպէս և Միացեալ-Նահանգների նախագահին, հեռագիրներ հետևեալ բովանդակութեամբ.

Պարոն մինիստր.

„Յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, որը 17 տարուց իվեր գործում է Թիւրքաց-Հայաստանում, մեր ժողովրդի բրոնաբարեալ իրաւունքների պաշտպանութեան համար, դիմումն ենք անում ձեզ, որ գործ դնէք ձեր ազդեցութիւնը՝ որպէսզի հայկական խնդիրը, հիմնուած միջազգային դաշնագրերի վրայ՝ ներկայացուի Լահէյի խորհրդաժողովին։ Դա մի պահանջ է, որ բղխում է հայ ժողովրդի ծանր կացութիւնից և եւրոպական պետութիւնների մի քանի անգամ կրկնած պաշտօնական խոստումներից։ Ուզում ենք յուսալ, որ ձեր պատգամաւորները չեն դլանայ անելու ինչ հնարաւոր է և հարկաւոր, պաշտպանելու հայկական դատը որը է միաժամանակ մարդկայնութեան և արդարութեան դատ“։

„ԴՐՕՇԱԿ“
Օրգան Հ. Յ. Դաշնակցութեան

Այդ պաշտօնական դիմումի հետ միասին, Դաշնակցութեան պատասխանատու մարմինը՝ Արևմտեան Բիւրօն, համաձայնութեամբ Պարիզի մեր ֆրանսիացի բարեկամների, ձեռք է առել միջոցներ, որպէսզի մեր խնդիրը յարուցի պետութիւնների պաշտօնաժողովի մէջ, հակառակ այն դիմադրութեան, որ արդէն ցոյց են տուել միապետական երկրներից մի քանիսի ներկայացուցիչները։ Պաշտօնական մերժման դէպքում՝ կուսակցութիւնը իրեն ազատ կը համարի ընտրելու բողոքի այն ձևը, որ կը թելադրեն հանգամանքները։

„ԴՐՕՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

ԹԻՖԼԻՍ, յուլիսի 22

Արիւնոտ դէպքեր տեղի ունեցան Մուշի մէջ յուլիսի 3-ին. կառավարութեան դրդմամբ՝ Թիւրք ամբոխը յարձակումն գործեց հայերի վրայ։ Կան մի քանի վիրաւորուածներ։ Զինուորական հրամանատարը՝ ականատես այդ բոլորին, ոչ մի միջամտութիւն չը գործեց։ Հայերը ապաստանել են եկեղեցիների և դպրոցների մէջ։ Շուկան փակուած է։ Կառավարութեան ենթակայ Թիւրք ամբոխը պատրաստում է մի նոր յարձակում։ Ցայտնուեց, որ մզկիթներում պահուած են մեծ քանակութեամբ զէնքեր։ Հայերին հալածելով, իշխանութիւնը նրանց տեղ՝ գիւղերում բնակեցնում է չէրքէզներին։ Մուշի շրջանի ազգաբնակութեան կացութիւնը վտանգաւոր է։ Եւրոպական հիւպատոսների միջամտութիւնը անհրաժեշտ։

—

„Դրօշակի“ խմբագրութիւնը հետեւեալ հեռագիրը ուղարկեց անգլիական, ֆրանսիական եւ իտալական արտաքին գործերի մինիստրներին։

Թիֆլիսի վրայով՝ Վանի հայ ժողովրդի կողմից ստացանք հետևեալ հեռագիրը, որ բովանդակում է բողոք իր ծայրահեղ կացութեան դէմ և որի վրայ հրաւիրում ենք ձեր ուշադրութիւնը։

„Վանի կուսակալ Ալի-բէյը անլուր միջոցներով, բառի լայն իմաստով, թալանեց թէ՛ գաւառի և թէ քաղաքի ժողովուրդը։ Հաւաքում են 22 տարուայ յետնեալ տուրքերը։ Ծանրաբեռնուած հսկայական տուրքի գումարներով՝ սովալուկ ժողովուրդը վերջին ծայր յուսահատութեան մէջ է։ Հարկահաւաքները չը կարողանալով դրամ գտնել, տների բոլոր անհրաժեշտ իրերն ու երկրագործական գործիքներն են կողոպտում. ուր շարժական ոչինչ չեն գտնում, քանդում են գոմերն ու տները, և գրաւում գերանները. այգիների ծառերը կտրատում են, գրաւում ու անշարժ կալւածները աճուրդի հանում։ Բռնաբարել են կանայք, պոկուած են մարդկանց բեխեր, տուրքերի փոխարէն կանանց պատիւն են պահանջում, ստիպում են 5—6 օրա ջուր խմել, մարդիկ գոմում տաւարների շարքն են կապւում, իսկ ծեծն ու ջարդը սահման չունին։ Ծեծից մեռել է Արատենց գիւղից մի հոգի, Նոր գիւղում մօր գրկում մի տարեկան երեխային սպանել են։ Հայոց-Զորից և միւս գիւղերից 2—300-ից աւելի կին, երեխայ և տղամարդիկ 5—6 օրից վեր քաղաքի փողոցներում գրեթէ գիշերելով, բողոքագիր են ներկայացրել հիւպատոսներին, որոնք կարծես վճռական քայլ անելու տրամադրութիւն ու հրահանգ չունին։ Առաջարկում ենք անմիջապէս դիմել եւրոպական կաբինետներին, ուժեղ ու յամառ պահանջ ղնելով ժամ առաջ վերջ տալու ներկայ դժոխային կացութեան, որ սպառնում է սովից մեռցնել, կրօնափոխութեան գիրկը նետել, մասսայական զաղթ առաջացնել կամ ընդդիմադրական յուսահատական քայլեր անել տալ ժողովրդին։ Խնդրում ենք միջամտել՝ վերջ տալու բոլոր յետնեալ տուրքերին, յարգելու իրենց հրատարակած օրէնքները և պահանջել ներկայ կամայական կուսակալի հրաժարեցումը“։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐ

ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇ

(1872—1907)

Միշտ ժողովրդի մէջ, միշտ ժողովրդին կպած—այդ էր նրա յեղափոխական տենչը, յատկանիշը նրա գործելակերպի, անսպառ աղբիւրը այն մարտական համարձակութեան, որով նա ապրեց, փայլեց ու վերջին րոպէին... այրուեց։

Տարօնի ու Տալորիկի տանջանքը իր աչքով չափեց. ականջով լսեց իր երկրի վշտոտ աղաղակը, և այդ վիշտն ու տանջանքը նրա հերոսութեան հնոցն եղաւ, ոգևորիչ հրեշտակը այն արիւնոտ ձեռնարկների, ուր նա շողքեր արձակեց իբրև զինուոր և խմբապետ, իբրև վրէժառու և յեղափոխող։

Երբէք թիկունք չը դարձրեց, երբէք ձեռք չ'առաւ տարագրի ցուպը։ Աչքերը Գրոգրոգ քարին յառած՝ նա մնաց մեծ՝ իր հաւատով, անյողդողդ՝ իր կամքով, անընկճելի՝ իր սրով...

Հերոս՝ Թշնամու դիմաց, հերոս մնաց և մահուան հանդէպ։ Զգուշութեան կոչերին անտարբեր, նա սիրած ժողովրդին կտակեց ոգևորութեան վերջին շեշտը—արհամարանք դէպի մահը—խորհրդաւոր ոյժը ըսքանչելի մեծագործութեան։

Ռազմիկ-ընկերները արտասուքով լուացին հերոս-մարտիկի դիակը, հեռաւորները՝ նրա խնկելի յիշատակը—արժանի սքանչացման և անհուն կսկիծի...

Գէորգ Զավուշի մանրամասն կենսագրութիւնը—յաջորդ անգամ։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒԻ

ԳԷՈՐԳ ՁԱՎՈՒՇԻ ՄԱՀԸ

ՄՈՒՇ, յունիս 14

Արդէն գրեցինք Տարօնի պաշտպան Գէորգ Զաւուշի հերոսական մահը։ Անոր ներկայութիւնը խիստ կ'անհանգստացնէր պաշտօնական շրջանները, ամէն կողմ լրտեսներ կը վխտային՝ իմանալու անոր տեղ և յանկարծակիի բերելու։ Եւ դէպքն ալ չ'ուշացաւ։ Մայիսի 27-ին Գէորգ Զաւուշ և Ռուբէն իրենց 17 զինուորներով Սուլուխ կը գտնուէին կարևոր գործով մը։ Այդ միջոցին երկու թիւրք կ'անցնէին գիւղով և ոչ ոք չէր կասկածեր անոնց ուղղութեան վրայ։ 2 ժամ վերջ գիւղը կը շրջապատուի զօրքերով և ոստիկաններով. Գէորգ Զաւուշ—ինչպէս միշտ, անվախ և յանդուգն—դուրս կը նետէ ինքզինք, թշնամու ահագին բազմութեան վրայ յարձակելու և ցրիւ տալու։ Զուր ընկերներ կը թախանձեն քիչ դադար լինել. ան բաց կուի կը մտնի զօրքերու հետ, ընկերներ կը ստիպուին հետևիլ անոր։ Կուի սկզբին իսկ Գէորգ Զաւուշ կը զարնուի։ Սպաղանցի Կալէն տեսնելով ընկերոջ զարնուիլը, առաջ կը նետուի, բայց ինք ալ կը զարնուի. անկէ յետոյ կը զարնուի և Կարսեցի Յակօն։ Այդ ձևով կուիը շարունակել անկարելի կը գտնէ Ռուբէն, որ իսկոյն կը դիմէ ուրիշ միջոցի. ան ամբողջ այժով կը դիմադրէ զօրքի գիւղ ներս խուժելուն, մինչև որ գիւղացիք կարող ըլլան գիւղէն քաշուիլ և ապաստանիլ գանազան գիւղեր։ Կուիը կը շարունակուի ամբողջ օրը։ Կուի ատեն կ'ընկնին Քէօսէ բինբաշի և 10 զինուորներ. թիւրքեր կը կատղին. բայց չեն կրնար գիւղ մտնել, մինչև մութը կը կոխէ։ Գիւղացիներ օգտուելով մթութենէն՝ հետզհետէ դուրս կ'ելլեն գիւղէն։ Ֆէդայիները, կուիը կը շարունակեն մինչև ուշ գիշեր, երբ այլևս կուիը շարունակել անկարելի կը նկատեն, դուրս կ'ելլեն գիւղէն։ Զօրքեր միայն առաւօտ կը համարձակին ներս խուժել գիւղ, ուր շատ քիչ մարդ մնացած էր։ Թիւրք ամբոխին ու զօրքը վրէժը կը լուծեն անմեղ գիւղացիներէ։ Նոյն օր գիւղին մէջ կը սպանեն Զաթօ Կարսեցի, Բարսեղ Յովասափեան 25 ամեայ, Առաքել Գասպարեան 48 ամեայ, Մկրտիչ Յօնոյեան 26 ամեայ և Մշեցի Աւօ Զուստեան 45 ամեայ։ Բռնաբարուել են գիւղի մէջ Յովսէփի կին՝ Կուլօ, Օհանի կին՝ Զըմոն, երկուքն ալ մանկահասակ կիներ և Նադոյի կին՝ Վարդէն, որ արդէն պառաւած էր։ Գիւղէն սարսափահար փախուստի ատեն Արածանիի մէջ ջրամոյն խեղդուեր են. գաւառի Սարգսի 2 ամեայ աղջիկը, Մուրատի մի ամսեայ աղջիկը, մշեցի Աւօի մէկ ու կէս ամեայ աղջիկը Հարկօն, Սրգոյի 2 ամեայ տղան, Մկրտչի հինգամեայ աղջիկը՝ Շուշան և Պէտոյի 7 ամեայ տղեկը։ Գիւղը բոլորովին կողոպտուած է, ժողովուրդը ցիրուցան, բոլոր արուները հալածական ու փախստական. գիւղացիներէն մինչև այժմ ձերբակալուած են 3 հոգի, մնացեալները կը փնտռուին։

Սուլուխի դէպքէն վերջ խիստ բռնութիւններ գործ դրուեցան շրջակայ հայ գիւղերու մէջ. շատ հայեր կը սպանուին։ Ցիշատակենք քանի մը հատ.—

Մայիսի 27-ին մշեցի Հաճի Սէֆու Ապտը Սահիմէ սպանած է սիճանցի Յովհ Սերոբան, Մեսրոբ Աղճոյեան և վիրաւորած է Սարօ Խուշոյեան և Վահան Յակոբեան, երկուքն ալ երիտասարդներ, և սուլուխցի Դաւէ Գասպարեան։ Մայիս 28-ին խրճրխցի Զօրաւուի քիւրդեր կը յարձակին Ցրօնքի վրայ և կը սպանեն՝ Մուշօ Սլոյեան 26 ամեայ, Պղտոյ Խաչոյեան 25 ամեայ, Ասիկ Գրիգորեան 28 ամեայ, Յակօ Ղազարեան 30 ամեայ, Զաքօ Մարգոյեան 20 ամեայ, Խչօ Մխիթարեան 65 ամեայ։ Մայիսի 30-ին Ծորիկ գիւղի մէջ կը սպանուի շէխիւսուփցի Մկրտ Մխէեան 25 ամեայ, իսկ Պետրոս Մկրէեան և Աւօ Պրղտէեան ծանրապէս վիրաւորուած են արտին մէջ։ Յունիս 4-ին քիւրդեր կը սպանեն Աբրօ Տէր Խաչատրեան 22 ամեայ։

Սարսափ է ամէն կողմ. ամբողջ մի շաբաթ քաղաքի խանութները փակուած էին. կառավարութեան միջամտութեամբ և բռնի՝ հայերը խանութները բացին, բայց չեն համարձակիր ազատ շրջիլ. ընդհանուր անապահովութիւն։ Զօրքեր ու ժանդարմներ կը փնտռեն ֆէդայիներու խումբը և յատկապէս Ռուբէնը։ Սուլուխի կուի մէջ Ռուբէնի խիզախ շարժումներն ու անվախ յարձակումները խիստ լարած են կառավարութեան ուշադրութիւնը, զայն ձերբակալել ինչ գնով և ըլլայ։

ԱՂԹԱՄԱՐԻ ԿՈՒԻԸ

ՎԱՆ, մայիս 17

. . . Երեքշաբթի առաւօտ, լուսաբացին լուր են տալիս որ մատնուած ենք և դրսի տունը ժամանել են 50 ձիաւոր։ Մենք ունէինք մեր տրամադրութեան տակ միայն մի փոքրիկ նաւակ, որ հազիւ 6—7 մարդ կարող էր վերցնել. պատուիրում ենք որ շուտով երկու տակառ պատրաստեն, որպէսզի հէնց առաջին յարմարութեանը՝ կղզուց դուրս թռչենք։ Այդ բոպէին քաղաքի կողմից երեք նաւ են գալիս և նոյնիսկ յանկարծ լսում է պատերազմական փողի ձայնը։ Մեզ համար այլևս անհնար է ծով դուրս գալ։ Վճռում ենք մի կերպով ձգձգել մինչև որ մութը վրայ հասնի։ Տղաներին բաժանում ենք դիրքերի վրայ և հրահանգում որ առանց մեր կարգադրութեան ոչ մէկ գնդակ չարձակեն։

Նաւերը մօտենում են կղզուն և մէկը այնքան մօտ է, որ մի քանի գնդակով կարող ենք սուզել ջրի տակ կամ անձնատուր անել տալ։ Բայց ի նկատի ունենալով կուի աննպատակ լինելը՝ տղաներին պատուիրում ենք այդ չ'անել։ Սպան տեսնելով մեր զինուորներից մէկին ուղղակի իրենց գլխի վերևը քարի մէջ պահուած, հրամայում է նաւավարին յետ դառնալու։ Զինուորները խիստ ծածկուում են նաւի մէջ։ Դրսից էլ հրամանատարը փողը փչում է և պատուիրում հեռանալ կղզուց։ Նաւերը մօտենում են ցամաքին, և գնում աւազի պարկեր լեցնելու, որպէսզի պատսպարուին մեր գնդակներից։ Միաժամանակ զինուորները թնդանօթները ամրացնում են Մանաճիհոի թերակղզու վրայ (քարայրի դիմաց)։ Թնդանօթները բերել էին քաղաքից գիշերը, քսան արկղ ռումբերի հետ։

Ժամի 8-ին ամէն բան պատրաստ է, նաւերը դանդաղ են գալիս։ Պարզ երևում է որ ամէն կերպ աշխատում են այդ օրը առանց ընդհարումի անցկացնել։ Ժամը 10 անցէ, սակայն ոչ մի լուրջ ընդհարում չը կայ։

Ի նկատի ունենալով, որ եթէ նաւը յաջողի մեր դիրքի արևելեան կողմը անցնել, որով մենք երկու կրակի մէջ կը մնայինք, որոշեցինք մի փոքր էլ սպասել և նշան տալ, որպէսզի եթէ յետ չը դառնան, կրակ անենք։ Տղաները թախանձագին խնդրում են կրակ բանալ. և երբ հաստատում ենք որ նաւերը յամառօրէն առաջ են անցնելու, կրակ ենք բաց անում։ Նաւարկութիւնը դադարեց. զինուորները թափուել են նաւի մէկ կողմը և թնդնուել։ Մերոնք կրակը շարունակում են։ Վերջապէս նաւավարը խնդրում է որ կրակը դադրեցնենք, աւելացնելով որ նաւը խորասուզուում է։ Կրակը դադրում է։ Մեր շարքերից զօրքին ասում են՝ „անմիտներ, մենք ձեր ազատութեան համար ենք կռուում, դուք ո՞ւմ համար եք կռուում“. բայց մեր ձայները խլանում են նոր աղմուկների մէջ. իբր պատասխան հէնց առաջին գնդակին՝ լսում ենք թնդանօթների որոտը. ռումբերը մեր գլխով անցնում են և ընկնում ծովը. մեր դիրքերը ապահով են, թնդանօթներից երկիւղ չունինք։

Արևը մօտենում է իր վախճանին, նաւերը հեռանում են և մենք պատրաստուում ենք ճանապարհ ելնելու իսկոյնեւթ, քանի լուսինը չէ բարձրացել և կղզին չէ պաշարուել։ Կղզում մնում են 5 աշակերտ, 2 կին, մէկ վարդապետ և մէկ ծառայ։

Այսը բացում է, մենք պատպարուած ենք բարձր լեռան գագաթին։ Վանի լճի ամբողջ գեղեցկութեան մէջէն Աղթամարը կամաց-կամաց բարձրացնում է իր գլուխը. մենք տեսնում ենք Բաֆիի քարը, որտեղից 50 տարի առաջ „Զայն տուր, ո՞վ ծովակ"-ի հեղինակի սիրտը լցնում էր անբաւ խոհերով։ Կղզին շրջապատուած է, զօրքերը ամբողջ գիշերը հսկել են, որ ֆէդայիները չը փախչեն։ Արևմտեան քաղաքի կողմից չորս նաւեր են գալիս։ Նաւերը կրկին հաւաքւում են Մանանճիհի բերդը. ուր Թնդանօթներ են դրուած, երևի զինուորական խորհուրդի համար։ Ցամաքի կողմից նոր զինուորներ են գալիս, որոնց թիւը հասնում է 5—600-ի։ Մինչև ժամը 8-ը ոչ մի շարժում, յետոյ նաւերը սկսում են առաջանալ դէպի կղզին։ Այս անգամ գնում են 7 նաւ, Թնդանօթը սկսում է իր աւերածութիւնը, կղզիից ոչ մէկ ձայն. զօրապետները կարծում են երևի ներսն ենք և խակարդ ենք լարում։ Երբ ներսէն կանչում են որ ոչ ոք չը կայ, սիրտ են առնում և մօտենում ափին։ Երկու կանայք հաւաստիացնում են, որ ոչ ոք չը կայ ներսը, բայց իսկոյն կրակ են բացում խեղճերի վրայ։ Ափ հասնելով զինուորները ցրւում են և սկսում կրակ տեղալ շինութիւնների վրայ և Թնդանօթների հետ միասին, որբերը յուսահատութիւնից դուրս են գալիս ընդառաջ հասմոզելու որ ոչ ոք չը կայ ներսը։ Վայրենացած մի զինուոր հրացանը գնում է Ազիզի կրծքին և սպանում։ Որբերից մէկը, 17 տարեկան պատանի, փորձ է անում փախչել դէպի ծով, նրան էլ գնդակահարում են։ Մօտենում է սպան և միւսները ազատւում են սպանելուց. նեխած բէժիմի պաշտպանները սիրում են խաղաղ անմեղ մարդկանց կոտորել, մինչ մենք մի օր առաջ խնայում էինք նոյնիսկ իրենց, համարելով նոյն փտած և անբարոյական բէժիմի զոհեր...։ Թալանի տենչով բռնուած՝ մտնում են եկեղեցի և կողոպտում բոլոր հնութիւնները, արծաթեղէնները, խաչերը կտրատում և իրենց մէջ բաժանում են։ Թնդանօթի ռումբերից քանդուել է հազարամեայ հրաշակերտ եկեղեցու գմբեթը։ 59 ռումբ են արձակել։

Նախորդ օրը մեր գնդակներից սպանուել է մէկ զինուոր, մէկը վիրաւորուել. իսկ նաւը մաղ է դարձած եղել. եթէ քիչ էլ ուշանար, կը խորտակուէր։

Կռուի միւս օրը եկաւ անգլիական հիւպատոսը և իր շուքը պտոյտեց այնտեղ,—հեգնութի՞ւն էր արդեօք այդ, մեր աղէտների հանդէպ, Մեծն-Բրիտանիայի ներկայացուցչի կողմից...

ՎԱՐԱԳԱՅ ԿՈՒԻԼ

ՎԱՆ, յունիս 24

Նոր նոր խնդիրներ անպակաս են, ամէն շաբաթ անպատճառ մէկ նոր դէպք կը պատահի. խստութիւնները կը շարունակուին, բայց ամէն գործնական քայլի կառավարութիւնը գրեթէ ինքն է որ կը պարտուի։ Լսեցիք թերևս ռումբի յանկարծակի պայթումը և մատնութիւնով գաղտնի պահեստի մը գտնուիլը՝ որուն հետևանքով ընդհանուր խուզարկութիւններ և ձերբակալութիւններ եղան և ի վերջոյ այդ մատնութիւնը ընող փոլիս Սահակի վրայ կատարուած տեռորը, որու ազդեցութեան տակ առժամապէս դրութեան թուլացում՝ առաջ եկաւ։

Ժողովուրդը կառավարութեան այդ տպաւորութեան տակ կը գտնուէր, երբ յունիս 23-ի գիշերը յանկարծ մեծ քանակութիւնով զօրք և ռազմամթերք ղրկուեցան Վարագայ լեռը, ուր ֆէդայիներ գտնելուն լուրը առած էր կառավարութիւնը։ Լուսադէմին երբ ֆէդայիները քնած էին ձորի մը մէջ, զօրքերը յանկարծ կսկսին կրակ ընել. տղաքները արթնալով իսկոյն դիրքեր կը բռնեն։ Առաջին հարուածէն կիյնայ միլպրմ՝ Շիւքրի պէյը, որ տեղիս երևելի ազդեցիկներէն էր և կատարուած չարագործութիւններուն մեծագոյն հեղինակներէն մէկը. իրեն հետ կիյնան նաև երեք զապթիէներ. այդ պահուն կսկսի գնդակի և ռումբի կարկուտ տեղալ և ամբողջ լեռը մշուշով կը ծածկուի։ Շիւքրիի սպանութեան լուրը Վան հասնելուն՝ կառավարութիւնը նոր զօրքեր կշտապեցնէ գնդապետ Ադամպէյի առաջնորդութիւնով։ Ամբողջ քաղաքը հեւիհեւ կը սպասէր դէպքի հետևանքի մասին. տանիքներու վրայէն որոտումներու ձայնը կը լսուէր։

Մինչև կէսօր կռիւը անընդհատ շարունակուեցաւ. կէսօրէն յետոյ թիւրքերը կամաց-կամաց սկսան քաշուիլ երբ տեսան թէ իրենց անընդհատ հրացանաձգութիւնը բանի մը չը ծառայելով՝ ժայռերու հետ էր որ կը պատերազմէին. իսկ ֆէդայիները իրենց հարուածները նպատակէ յետոյ անհերևութացեր էին, թողնելով մէկ քանի բերդանկաններ, որը լեռը տարած էին փորձելու, 2—3 ձի և քանի մը եափունճիներ։ Սպանուած է նաև հայ խեղճ գիւղացի մը, որ արևագէմին բանջար ժողուելու էր գնացեր։

Շիւքրիի դիակը տեսնելով թիւրք ամբոխէն մաս մը —աւելի իր պարագաները—կառավարութեան դուռը դիմելով թոյլտուութիւն ուզեցին խուժան կազմել և Շիւքրիի սպանման վրէժը լուծել. կառավարութիւնը արգիլեց։ Ժողովուրդը այդ օրը չը կրցաւ քաղաք գնալ։ Կառավարութեան տրամադրութիւնը կը տարուբերի։

Այսօր հեռագիր եկաւ Պիթլիսէն, որ այնտեղ կուսակալի տան վրայ յարձակեր և սպանութիւններ եղեր են. մասէյնի հետ անընդհատ հեռագրական փոխանակութիւններ կ'ըլլան։ Տեղիս Ֆէրիքը այսօր կամ վաղը մէկ վաշտ զօրքով մեկնելու է Պիթլիս։ Շարժման ալիքները սպառնալից կը թուին։

ԱՂԹԱՄԱՐԻ ԴԷՊՔԵՐԸ

Աղթամարից Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղուած է հետեւեալ պատօնական հեռագիրը, որը մենք սացանք Կ. Պոլսից եւ տպագրում ենք նոյնութեամբ։

Ամենապատիւ...

Արդէն մեր՝ համար 300 և 404 գրութիւններով տեղեկացուցած էինք Ձերդ Բ. Սրբազնութեան վիճակիս ժողովրդեան անտանելի և վտանգաւոր կացութիւնը, անոր անկարագրելի թշուառութիւնը, խնդրելով ձեր ազգու միջամտութիւնը կայսերական գթառատ շնորհներու և ողորմածութեանց համար, սակայն ցաւդ չէ թէ ոևէ շնչին թեթևութիւն մը կամ բարւոքում մը չը տեսնուեցաւ, այլ նորանոր երևան եկան աւելի ծանր, աւելի ապանիչ պայմաններ՝ որով այս ցամքած ժողովուրդը տնտեսապէս խպառ քայքայուեցաւ լքուեցաւ, և արդէն տնտեսականի—ան, հողի, արտի, ապրուստի, վաստակաւոր լծկան եղնների և այլն կենսական իրերի կորստեամբ, թէ ժողովուրդ ի՜նչ աստիճան բարոյական մեծ լքման և այլասերման ենթարկուած է, դա արդէն ակներև է և բացորոշ նշաններն իսկ կ'երևին։

Մինչև այսպէս սովի և անօթութեան մատնուած ժողովուրդը յուսահատութեան խոր վիհն մտուցած, հոն իր վերջնական կորուստը կ'որոնէր, յանկարծ մի սոսկալի ահռելի, մի անակնկալ դէպք վրայ հասնելով, յուսահատ ժողովրդի այդ կորստաբեր քայլը իրականացնելով հանդերձ փութացուց. դա Աղթամարայ կղզւոյն ռմբակոծութիւնն էր. այդ հնամեայ վանքի թալանն ու աւերն էր, որի մասնրամասնութիւն կը փութամ գրել և տեղեկացնել Ձերդ բարձր սրբազնութեան յետագայիս։

1907 ապրիլ 18-ին խումբ մը յեղափոխականներ, մեր կամքէն անկախ միջոցներով, գացեր գաղտնի կղզին ապատաներ էին, որմէ երեք շաբաթ առաջ, ես ինքս արդէն քաղաք իջեր էի ժողովրդի անտանելի կացութեան մասին դարման մը և ճար մը խորհելու և գտնելու համար, որուն կը վկայեն նոյն ատենուան վսեմ. սատարէթին և թէ ձերդ սրբազնութեան ուղղած խնդրագրեր և հեռագրեր։

Կառավարութիւնը իմանալով անոնց կղզին ապատանիլը, 800 զօրքով, 9 նաւերով և մի քանի մեծ թնդանօթնե-

րով կղզին պաշարեց. կռիւը երկուստեք երկու օր շարունակելէ վերջ, յեղափոխականներ գիշերուան մթութենէն օգտուելով կղզիէն խոյս կուտան։ Սակայն երրորդ օրն ալ ռումբակոծութիւնը շարունակուեցաւ, մինչև խուզարկու 9 նաւերով զօրքեր դուրս ելան, ուր չը գտնելով «չ մի յեղափոխական, իրենց բովանդակ շարիք կը թափեն հոն եղող 5 դպրոցական որբերու, 1 վարդապետի, 2 հայրարար կնոջ և 2 սպասաւորներու վրայ։ Շարաչար ծեծելով և նեղելով զանոնք՝ գնդակահար կը սպանեն 1 աշակերտ և 1 սպասաւոր, որոնցմէ մինն ալ, ի տես զօրաց անգութ և ահռելի արարքներուն, ինքզինք ծով կը ձգէ, և ի վերջոյ նաւավարներու միջոցով կ'ազատուի խելագարուած։

Այսքանով չը բաւականանալով կը խրատակեն եկեղեցւոյ դուռը և կը կողոպտեն հոն պահուած բովանդակ սպասներ. որոնցմէ մէկ մասը—խաչ, աւետարան, սկիհ, զգեստ, գաւազան և այլն—ջախջախուած, ջարդ ու փշուր եղած և պատռտուած ետ կը դարձուին, որոնք արդէն այլևս ոչինչի կարող են ծառայել, իսկ մեծ մասն ալ տարուած անհետացած է, որոնց ճշգրիտ ցուցակը ներփակ կը ստանաք՝ անով յայտնի իմանալով այն ահագին վնասը զոր ունեցաւ վանքը, ինչ որ մեր հաշուով 2000 լիրայէն աւելի է։

Զը նայած որ յեղափոխականներ շէնքէն դուրս կղզիին բարձր և անջատ ծայրին վրայ կը կռուէին՝ պաշտպանութիւնը հակառակ խղճի և օրինաց ուղղակի շէնքեր ռմբակոծեց, 60 հատ ռումբ արձակելով հոն, որով շէնքերու մէկ մասը խարխուլ և փլած վիճակի մատնուեցաւ, իսկ որ ցաւալին է պայծառ տաճարի կամթուղիկէի գլուխը՝ խաչով հանդերձ՝ մէկ մարդահասակէն աւելի, քշուած է ռումբէն, ուսկից անձրևի ջուրս ներս հոսելով մէկ քանի տարիէն պիտի փճացնէ հազարամեայ փառաւոր հնութիւն մը։

Ներկայ դժբախտ աղէտին պատճառաւ միաբաններ երկիւղէն կէս խելագար դուրս ելան՝ թողլով հոն ամայի և անմարդաբնակ, իսկ դրսի տան տրուած վնասը 20 լիրայէն աւել է։ 40 հեծեալ զօրք հոն կերան, խմեցին իրենց ձեռքով, ազատ և լպիրշ շարժումով, 10 չափ գարի, 200 խուրձ խոտ կերցուցին ձիաներուն, 5 չափ ցորեն իրենք կերան, թողունք իւղ, շաքար և բոլոր մանրմունր բաներ, որոնց առջև չը կարողանալով առնել մեր բացակայութեան հոն հրամայող Դանիէլ վարդապետը, նամանաւանդ անարդանքներէ անտեղի հայհոյանքներէ, խիստ սպառնալիքներէ ու բանտարկութենէ սարսափած, խոյս կուտայ և հիմա ալ թագնուած է։ Նոյն օրերու մէջ սարսափահար կը մեռնի նաև մեր դպրոցի ծերունի գիշերապահը։

Արդ, ի՞նչ իրաւունք է որ անմեղ ժողովուրդը զանազան դառն աղէտներու մատնուի, դպրոցական խեղճուկ որբեր մորթուին, եկեղեցւոյ մեծաքանակ սպասներ կողոպտուին յեղափոխականաց պատրուակով. ի՞նչ ընէ ժողովուրդ որ իր կամքէն անկախ յեղափոխականներ կը մտնեն այսպիսի տեղեր, ինչո՞ւ պիտի տուժէ անմեղը, երբ անոր քով չը գտնուի նոյնիսկ մի վնասակար թուղթ, թերթ, գրուած մը և կամ զէնք մը։

Ահա ժողովուրդի տագնապալի և արհաւրալի բոպէներուն ամենուս սիրտ հաւասարապէս խոր խոցած անակնկալ և ցաւալի դէպքին ճշգրիտ նկարագրութիւնը, զոր փութացի գրել և տեղեկացնել Ամենապատիւ ս. Հօրդ, մի դէպք որ մրմուռ ազդեց եօթանասունհինգամեայ ծերունիս վրայ, որ քակեց, աւեր դարձուց հեգիս բոյնը և իմ համայն ժողովրդեան միակ ու նուիրական մխիթարավայրը, որն դարուց ի վեր կը պահէր և կը պահպանէր իր կրօնական և բարոյական բարձր հեղինակութիւնը իրմով միայն մխիթարող տառապեալ և անոյշ ժողովրդի վրայ։ Սակայն վերոգրեալ դէպք խախտման և ջնջման ենթարկել կը սպառնայ վանքի այդ դարաւոր հմբաւ, հմայքն ու բարձր հեղինակութիւն, եթէ երբէք մեր բողոք ապարդիւն անցնի։ Նամանաւանդ այս կերպ օրէցօր աւելի և աւելի արհաւիրքներով և տագնապներով լի վտանգաւոր կացութեան մը շարունակութեան վերջ տուելու համար եթէ անմիջական դարմաններ չը լինին՝ 1896 թուականի զարհուրելի դէպքէն ու կոտորածէն ալ աւելի վատթար և վտանգաւոր ջարդերին կրկնութիւնը անխուսափելի է, որու համար ես այս անգամն ալ, ինչպէս ընդմիշտ, չունենալով ուրիշ միջոց, դարձեալ գրով կը դիմեմ Ձերդ սրբազնութեան՝ խնդրելով որ հաճիք ձեր կրկնակի խնդիրներով հրաւիրել կայսերական առատ ու անհուն գթութիւնը, կարեկցութիւն և ուշադրութիւն մեր աւերակ ամայի դարձած վանքի և իր հպատակ ու թշուառ ժողովրդեան ցաւերի վրայ, որպէսզի նա իր անսահման արդարադատութեամբ և ողորմութեամբ վերջ տայ կարգ մը պաշտօնէից ապօրինի, անարդար և զեղծ արարքներուն՝ ամոքելով այնու մեր արդի ցաւալի կացութիւնը, որուն ակնապիշ կը սպասեն հազարաւոր նեղեալ և տառապեալ հպատակ անձինք։

Աղթամարի կաթ. տեղապահ

(Ստորագրութիւն)

1907 մայիս 13
Աղթամար

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Առաջին Նամակ

Ներկայ նամակներուն նպատակն է՝ տալ հանրամատչելի մեկնաբանութիւններ Դաշնակցութեան—իբրև յեղափոխական և սոցիալիստական կազմակերպութեան—ծրագրային պահանջներին, կանգ առնելով, հարկաւ, այդ ծրագրի ամենակարևոր կէտերի վրայ միայն։

Սկսենք այս հարցից՝

—Ինչո՞ւ համար այսօր աշխարհում այնքան քաղցած, ճնշուած, տառապող, իրաւազուրկ և ընդհանրապէս այնքա՞ն դժբախտ մարդիկ կան։ Ինչո՞ւ համար միլիոնաւոր մարդիկ քաշ են տալիս իրենց կեանքը թշուառութեան մէջ, կոշտացած տգիտութեան ճանկերում, կռացած աշխատանքի տակ, ենթակայ ամեն տեսակ բռնութեան, զուրկ որևէ կամքից... այն ժամանակ, երբ մարդկանց մի փոքրիկ խմբակ խեղդւում է պերճանքների ու շքեղութեան մէջ, օգտւում լիառատ կերպով գիտութեան և արուեստի բարիքներից, վարում կիսադատարկ և շատ անգամ բոլորովին անգործ մի կեանք, կրում իր ձեռքում իշխանութիւնը և վայելում կամքի ազատութիւնը...

Ինչո՞ւ համար այս բոլորը...

Այս հարցերի պատասխանը պէտք է որոնել մեր ամբողջ կեանքի կազմի մէջ։ Չի կարելի ասել, որ մեր երկիրը աղքատ լիներ հողով և բնութեան այլ բերքերով,—բայց բոլոր այդ հարստութիւնները կենտրոնացած են սակաւաթիւ մարդկանց ձեռքում ու կազմում են—ինչպէս ընդունուած է ասել—նրանց մասնաւոր սեփականութիւնը։

Քիչ չեն նաև մեզ մօտ գործարաններ և ամենատեսակ արդիւնաբերութիւններ՝ գործարանային և արդիւնաբերական աշխատանքի անհրաժեշտ գործիքներով, արտադրելու համար ամենակենսական առարկաներ։ Եւ սակայն այդ հարստութիւններն էլ կազմում են մի քանի ընտրեալների մասնաւոր սեփականութիւնը։

Շենք կարող դանգատուել վերջապէս, և դրամական հարստութեան սակաւութիւնից, ինչպէս և կապիտալի անբաւարարութիւնից, այս բառի առօրեայ իմաստով։ Բայց... նրանք էլ, մեծ մասամբ, կազմում են առանձին անհատների ստացածքը—նրանց մասնաւոր սեփականութիւնը։

Եւ այսպէս, հողն ու հողի միջուկը, գործարանները, արդիւնաբերութիւնները, մեքենաները և դրամային կապիտալը,—դրանք բոլորն էլ, կամ ինչպէս կոչում են նրանց—ժողովրդի տնտեսական կեանքի միջոցները ու գործիքները կենտրոնացած են մեծ կալուածատէրերի, արդիւնաբերողների, վաճառականների և բանկիրների ձեռքերում, կազմում են մի քանի բախտաւորների—կապիտալիստների մասնաւոր սեփականութիւնը։ Ու այսպիսով՝ ժամանակակից հասարակութեան գրեթէ մնացած ամբողջ մասը ծառայում է կապիտալիստին։ Այս մասը կազմւած է չունեւորներից։ Կարիքն ու քաղցը հարկադրում են նրանց ծախել իրենց միակ հարստութիւնը,—բանւորական ոյժը։ Այդպէս էլ նրանք անում են, այդպիսով էլ նրանք ապրում են։

Մենք գտանք պատճառներից մէկը այն անարդարութեան, որի վրայ հիմնւած է „լուսաւորեալ" ժողովուրդների կեանքը ընդհանրապէս, և Ռուսաստանինը՝ մասնաւորապէս։ Այդ պատճառը թաղնւած է ժամանակակից տնտեսական կեանքի կազմի մէջ։ Մեր տնտեսական կեանքը կառուցւած է մասնաւոր սեփականութեան և ուրիշի աշխատանքի շահագործման ըսկզբունքների վրայ։ Աշխատանքի մարդիկ կորզւած են արդիւնաբերութեան գործիքներից, այսինքն կապիտալից և այդ պատճառով նրանք հարկադրւած են աշխատել կապիտալիստների համար։ Իսկ արդիւնաբերական գործիքների սեփականատէրերը—կապիտալիստները կարիք չունին աշխատելու և ապրում են ուրիշների աշխատանքով կամ, ուրիշ խօսքով, շահագործում են աշխատաւոր թշւառ ժողովուրդը։

Այսպիսով, շնորհիւ ժամանակակից տնտեսական կեանքի կազմի, մեր հասարակութիւնը բաժանւում է երկու դասի—աղքատների ու հարուստների, վաստակաւորների ու ձրիակերների, պրոլէտարների ու կապիտալիստների։

*

Արդէն հնուց ասւած է. ուր հարստութիւն, այնտեղ և ուժ. և ուր ոյժ՝ այնտեղ և իրաւունք։ Անարդար է այդ, բայց այդպէս է։ Նոյնը տեսնում ենք և այսօր։

Ժամանակակից կապիտալիստական դասակարգային պետութեան մէջ ո՞վ է կառավարում բոլոր գործերը, օրէնքներ դնում, դատաստան կտրում, հարկեր նշանակում, որոշում պետական ելքն ու մուտքը. ո՞վ է, մի խօսքով, իր ձեռքում պահում քաղաքական իշխանութիւնը,—դարձեալ ու դարձեալ ընտրեալների փոքրաթիւ խմբակը, կազմւած հարուստ ու ծագումով „յայտնի" մարդկանցից։ Իսկ աշխատաւոր մասսաները—նոյն այն միլիոնաւոր մարդիկ, որոնց աշխատանքով պահւում է պետութեան ամբողջ տնտեսական կեանքը—ապրում են իբրև ստրուկներ, որոնց քշում են ինչպէս հլու ոչխարահօտ, օգտւելով այն բանից, որ նրանք աղքատ են ու տգէտ։ Դրա մէջն է երկրորդ կարևոր պատճառը այն անարդարութեան, որ դրւած է ժամանակակից կեանքի հիմքում։

Սակայն այստեղ կայ մի ուրիշ, ոչ նւազ կարևոր պատճառ ևս։ Ուր կայ իշխանութիւն և հարստութիւն, այնտեղ է և նրա անբաժան ընկերը—պարապութիւն. իսկ որտեղ կայ պարապութիւն, այնտեղ հնարաւորութիւն կայ տրւելու գիտութիւնների և արւեստների, այսինքն զարգացել միտքը և ազնւացնել սիրտը։ Աշխատաւոր դասակարգերը իրենց տրամադրութեան տակ այդպիսի պարապութիւն չունին։ Նրանց ամբողջ կեանքը անցնում է մի կտոր հացի համար մղւած աշխատանքի շուրջը։ Էլ ի՞նչպէս նրանք մտածեն մտքի զարգացմանքի ու սրտի ազնւացման մասին։ Դեռ լաւ է, եթէ սոփլած չը լինին մուրացիկի պարկը ձեռքը առնել և կամ թէ չը մեռնին որևէ մի անկիւնում, ցանկապատի տակ, քաղցից ու ցրտից... Եւ այսպէս ժամանակակից կեանքի ամբողջ կազմը հանգչում է անհաւասարութեան վրայ։ Անհաւասարութիւն տնտեսական, անհաւասարութիւն իրաւական և անհաւասարութիւն կուլտուրական,—ահա այն „երեք կետը", որոնք պահպանում են ժամանակակից ժողովուրդների ամբողջ կեանքը շղթայող և մարդկութիւնը արատաւորող անարդարութիւնը։ Եւ այս երրեակ անհաւասարութիւնից տառապում են նոյնիսկ այնպիսի լուսաւոր երկիրներ, ինչպէս Անգլիան և Ֆրանսիան։ Իսկ Ռուսաստանի և Թիւրքիայի մասին խօսելն անգամ աւելորդ է։ Այս երկրներում անարդարութիւնը արտայայտւում է շատ աւելի խիստ և շատ աւելի արատաւոր կերպարանքով...

Ի՞նչ պէտք է անել, որպէսզի վերջ դրւի այդ անհաւասարութեան։ Դրա համար պէտք է միանգամայն նոր հիմունքների վրայ կառուցանել ժողովուրդների տնտեսական, աշխատաւորական ամբողջ կեանքը։ Եւ ժողովուրդները հանդարտ, բայց ապահով քայլերով գնում են դէպի մի այդպիսի վերաշինւածք, գնում են դէպի սոցիալիզմ, շահագործական ու կապիտալիստական պետութիւնից դէպի ազատ ու աշխատաւորական պետութիւնը։

Եւ հէնց ինքն այդ անունը—„աշխատաւորական պետութիւն", ցոյց է տալիս, որ ապագայ հասարակութեան մէջ ամենքը էլ պէտք է աշխատեն, ոչ ակամայ, այլ ազատ, ոչ հարկադրւած, այլ գրաւիչ աշխատանքով։ Եւ այն ժամանակ կեանքը կը լինի գեղեցիկ ու գրաւիչ։—Եւ ինչո՞ւ պիտի վերանայ բռնի, ակամայ, մարդու մարմինը քայքայող ու հոգին մեռցնող աշխատանքը։ Որովհետև այն ժամանակ չի լինի այլևս գործիքների և արդիւնաբերական միջոցների մասնաւոր սեփականութիւն. որովհետև բնութեան բոլոր բարիքները և մարդկային ձեռքի բոլոր ստեղծագործութիւնները—գործարաններ, հանքեր, մեքենաներ և այլն, մի խօսքով կապիտալի բոլոր ձևերը կը դառնան ամբողջ աշխատաւոր ժողովրդի ու հասարակութեան ստացւածքը. որովհետև այն ժամանակ կը ջախջախւի կապիտալիստական տնտեսութիւնը, կը ջախջախւին նաև նրա հետ կապւած տնտեսական գերութեան բոլոր ձևերը, աշխատաւոր մեծամասնութեան կախումը դատարկապորտ ու անգործ փոքրամասնութիւնից—հիմնական պատճառն ու աղբիւրը դառնագին ապրուստի և նրա հետ կապւած բռնի, ակամայ աշխատանքի...

Տնտեսական կեանքի կապիտալիստական կազմի հետ միասին կը չքանայ ընդ միշտ նաև հասարակութեան բաժանումը դասակարգերի.—զրկողների և զրկւածների, սեփականատէրերի և սեփականազուրկների, կապիտալիստների և պրոլետարների։ Իսկ երբ կը վերանայ մարդկանց բաժանումը միմանց թշնամի դասակարգերի, այդ նոյն հանգամանքը ինքը վերջ կը դնի նաև հրամայողների ու ստորադրեալների հակամարտութեան. հակամարտութիւն՝ որ տալիս է մի շարք մարդկանց ամեն ինչ, և միւսներին զրկում ամենատարրական մարդկային ու քաղաքացիական իրաւունքներից։ Աշխատաւորական պետութեան մէջ ամենքն էլ

կ'օգուին հաւասար իրաւունքներով, ամենքն էլ մասնակցութիւն կ'ունենան իրենց հայրենիքի պետական և հասարակական գործերում։ Այն ժամանակ, այդ փառաւոր ու երջանիկ օրերում, աշխատաւոր մասսաները այլևս հարկադրուած չեն լինի ենթարկուելու ինքնակոչ իշխանութիւններին, որոնք իրենց ձեռքն են առել կառավարութիւնը միայն այն պատճառով, որ իրենց ձեռքումն է հարստութիւնը, ուրեմն և՝ ոյժն ու իրաւունքը։ Այն ժամանակ տնտեսական կատարեալ ազատագրման հետ միասին՝ աշխատաւոր մասսաները ձեռք բերած կը լինեն նաև կատարեալ քաղաքական ազատագրութիւն։

*

Սակայն ոյժը միմիայն հարստութեան մէջ չէ. նա գտնւում է նաև գիտութեան մէջ։ Տգիտութիւն ու խաւար—ահաւոր ինչումն է կայանում, աղքատութիւնից զատ, աշխատաւոր մասսաների թուլութիւնը։ Հասարակութեան հրամայող դասակարգերը իրենց բարեկեցութիւնը հիմնում են ոչ միայն ժողովրդի աղքատութեան, այլ և տգիտութեան վրայ։ Աշխատաւորական պետութեան մէջ ինքնըստինքեան կը խորտակուի և՝ այդ աղաղակող անարդարութիւնը։ Կապիտալիստների և ինքնակոչ կառավարողների իշխանութիւնից ազատուած ժողովուրդը՝ հնարաւորութիւն կը ստանայ ազատօրէն մարդել ու զարգացնել իր հոգեկան կարողութիւնները։ Նրա միտքը կամրանայ և լուսաւորուած հոգին կը հրաժարուի հաւատ ընծայել այն բովանդակ անհեթեթութեանը, որ այժմ առաջարկում են ժողովուրդներին՝ նրանց կեղծ, ագահ շահագործողները։ Ճշմարտութեան տաճարի լայն ճանապարհը կը բացուի ամենքի համար և գիտութիւնը կը դադարի փոքրաթիւ բախտաւոր ընտրեալների արտօնութիւնը համարուել։

Մեր օրերի կապիտալիստական պետութեան մէջ մարդկանց ահագին մեծամասնութիւնը անց է կացնում իր կեանքը տաժանակիր աշխատանքներում՝ յոգուստ ծոյլ ու պորտաբոյծ փոքրամասնութեան։ Իսկ աշխատաւորական պետութեան մէջ ամենքն էլ կ'աշխատեն ամենքի համար։

Այսօր թէ՛ հարստութիւնը, թէ՛ գիտութիւնը, թէ՛ ազատութիւնը հանդիսանում են փոքրաթիւ շահագործողների ու բռնակալների սեփականութիւնը։ Ապագայի պետութեան մէջ ամբողջ հասարակութիւնը լիակատար կերպով կունենայ թէ՛ հարստութիւն, թէ՛ գիտութիւն և թէ՛ ազատութիւն, կարճ ասած՝ ժամանակակից պետութիւնը ձևակերպուած է յոգուստ փոքրամասնութեան, վաղւան պետութիւնը կը ձևակերպուի յոգուստ ընդհանրութեան։

„Աշխատաւորական պետութիւնը" այն „լաւագոյն ապագան" է, որին ձգտում՝ են բոլոր երկրների սոցիալիստական կուսակցութիւնները ընդհանրապէս և Հ. Յ. Դաշնակցութիւնը մասնաւորապէս։ Դա նրանց ծրագիր—մաքսիմումն է։

Սակայն ճանապարհը դէպի „լաւագոյն ապագան" դիւրին չէ. նա խճճուած է հազարաւոր խոչընդոտներով, որոնք կազմուել են դարերի ընթացքում շնորհիւ ժամանակակից պետութեան տէրերի—կապիտալիստների ու իշխանաւորների։ Աշխատաւոր մասսաները հարկադրուած պիտի լինին վարել նրանց հետ յուրջ, յամառ, գուցէ և կատաղի կռիւ։ Ժամանակակից կեանքի տէրերը իրենց նպատաւոր դիրքերը շուտ և դիւրութեամբ չեն զիջի։ Կռուի յաջողութիւնն ու աշխատաւոր մասսաների յաղթանակի արագութիւնը կախուած է երկու կարևոր պայմաններից,—անհրաժեշտ է մինչև վերջին, վճռական ճակատամարտը յանուն սոցիալիզմի՝ կոտրել կապիտալիստների և նրանց պաշտպանների ոյժը, անհրաժեշտ է հիմքից վերացրնել այն պատնէշները, որոնք գտնւում են սոցիալիզմի ճանապարհի վրայ. անհրաժեշտ է մաքրել և լայնացնել այդ ճանապարհը։

Բայց դա գործի մէկ կողմն է միայն. կայ նաև մի ուրիշը՝ նոյնչափ կարևոր։ Աշխատաւոր մասսաները կը յաղթեն միայն այն ժամանակ, երբ նրանք ուժեղ կը լինեն—ուժեղ գիտութեամբ, ուժեղ՝ թշնամու և բարեկամի ճշգրիտ գիտակցութեամբ, ուժեղ՝ միութեամբ։ Հետևաբար՝ սոցիալիզմի իրականացումը մօտեցնելու նպատակով, հարկաւոր է այժմ իսկ կեանքի կապիտալիստական կազմի մէջ անել ինչ հնարաւոր է, որպէսզի կարելի լինի նախ՝ կրճատել կապիտալիստ-շահագործողների իշխանութիւնը, և երկրորդ՝ բարելաւել աշխատաւոր մասսաների կեցութիւնը, դարձնել նրանց լիազօր և իրաւատէր քաղաքացիներ, լուսաւորել նրանց միտքը, ժողովել ընկերական ու ընդհանուր իդեաներով տոգորուած մի բանակի մէջ։ Այդ ձգտումների համախմբումը ահա կազմում է ընդհանրապէս սոցիալիստական կուսակցութիւնների և մասնաւորապէս Դաշնակցութեան ծրագիր-մինիմումը*։

Երբ բովանդակ աշխատաւոր ժողովուրդը—և՝ գիւղացիները, և՝ գործարանային բանւորները, և՝ մտաւոր աշխատանքի մարդիկ, և՝ բոլոր միւս չունևոր վաստակաւորները—կըմբռնեն իրենց թշուառ վիճակի իսկական պատճառը, երբ նրանք կը լցւին անհաշտ թշնամութեամբ դէպի ժամանակակից կեանքի հիմնական սկզբունքները և իրենց ամբողջ սրտով միաձայն ոյժով, իբրև մէկ մարդ, կը ձգտեն դէպի նոր ու լաւագոյն շէնքը, այն ժամանակ կը խփի կապիտալիստական կազմի վերջին ժամը։ Աշխատաւոր ժողովրդի վաղեմի թշնամիները չեն դիմանայ այդ հզօրագոյն հոսանքի ալիքներին և բազմաչարչար մարդկութիւնը ամուր ու հաստատուն քայլուածքով մուտք կը գործէ արդարութեան և ազատութեան... վաղուց երազած թագաւորութիւնը։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

„ՌՈՒՍԱՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ" ՀՈՍԱՆՔ

ԿԱՐԻՆ, 12 յունիս

Ձեզ արդէն յայտնի է, թէ կարնոյ դաշտի բոլոր հայ գիւղերէ բազմաստորագիր խնդրագրերով դիմեցին տեղիս Ռուսաց հիւպատոսին և խնդրեցին ընդունել ռուսահպատակութիւն, քանի որ այլևս տոկալ չեն կրնար գործադրուած հարստահարութիւններուն և հալածանքին։ Թէպէտ հիւպատոսի կողմէն մերժուեցաւ անոնց խնդիրը, բայց այս չյուսահատեցուց դրացի գաւառներու հայերը՝ նոյն դիմումը ընելու։ Այժմ այս բողոքախառն խնդրագրերէն 13 հատ ունինք աչքի

---

* Մինիմում-ծրագրի հիմնական կէտերի մեկնութեան նուիրուած կը լինին յաջորդ նամակներից մի քանիսը։

առջև, որոնցմէ իւրաքանչիւրն ստորագրուած ու կնքուած է բազմաթիւ անձերէ։ Սրտաճմլիկ ու աղէխարշ են մէջ բերուած իրողութիւնները. անոնց մէջ բուն իսկ թշուառութիւնը պատկերացուցուած է բազմաթիւ փաստերով։ Մէկ-մէկ մէջ բերելը անկարելի է, որովհետև հարկ պիտի լինի թերթեր գրել, ուստի կը համառօտենք փաստերը։

1.—Նոր հարկերը կը ծանրանան, տարիներ առաջ վճարուած տուրքերը վերստին կը պահանջուին, տուրքերը գանձելու համար ամէն ինչ՝ շարժական ու անշարժ բոլոր ստացուածները՝ ծախել կը հրահանգուին, հարկահանները ամէն տեսակի բռնութիւններ ու հարստահարութիւններ կը գործեն։

2.—Թիւրքերու և քիւրդերու կողմէն բռնի կերպով կը գրաւուին հայերու կալուածներն ու անասունները, որոնց համար կառավարութեան բոլոր ատեաններու առջև ըրած բողոքները կը մնան անլսելի։

3.—Հայ գիւղերու մէջ դրուած զինուորներու չարագործութիւնները ամէն չափ ու սահման կ'անցնին. աղջիկ, հարս և մինչև իսկ պատանիներ բռնաբարելը սովորական բան դարձեր է։

4.—Թիւրքերու, քիւրդերու կողմէն աղջիկ, հարս բռնի տանելն ու մահմետական դարձնելն այնքան ընդհանրացած երևոյթ է, որ գիւղ չկայ, ուր տարին քանի մը հատ տեղի չունենայ։

5.—Գիւղերու տասանորդը կը ծախսի և գնորդները այս անուան տակ ամէն տեսակ աններելի միջոցներու կը դիմեն՝ գիւղացիները կեղեքելու և ըստ կարելոյն շատ շահելու։

6.—Երիտասարդ աչքի ընկնող հայեր սպանելը այնքան սովորական բան է, որ բողոքելն անգամ աւելորդ կը նկատեն, քանի որ մարդասպանը բանտ անգամ չի տարուիր, այլն այլն։

Այս բովանդակութեամբ բողոքագիրներ տուած են հետևեալ գիւղերը. Դերջանի գաւառէն՝ ա) Ծաղկաթի գիւղ, ստորագրած են 9 հոգի, իբրև լիազօր ներկայացուցիչներ, բ) Հրանի գիւղ, ստորագրած են իբրև ներկայացուցիչ 4 հոգի, գ) կոթեր գիւղ, ստորագրեր են 160 ընտանիք (843 հոգի), դ Խումլար գիւղ 30 ընտանիք (238 հոգի)։ Բասեն գաւառէն ա) Իշխու գիւղ, 80 ընտանիք (787 հոգի), բ) Կրտապազ գիւղ, 40 ընտանիք (անձերու թիւն նշանակուած չէ), գ) Լղան գիւղ 135 ընտանիք (958 հոգի), դ) Պատիժուան, 22 ընտանիք (215 հոգի), ե) Գոմաձոր 134 ընտանիք, (1072 հոգի), զ) Հարսնիքար, 26 ընտանիք (261 հոգի), է) Տօրի գիւղ, 40 ընտանիք, (անձերու թիւն անյայտ), ը) Ծանծաղ, 51 ընտանիք (38 հոգի)։ Գիւղ մը որու անունը նշանակուած չէ խնդրագրի մէջ մոռացմամբ, բայց որի վրայ ստորագրեր են 68 ընտանիք (659 հոգի)։ Հոս նշանակուած ընտանիքներէն իւրաքանչիւրի ներկայացուցիչը կնքեր և ստորագրեր է։

Բողոքողներու ներկայացուցիչներէն ձերբակալուած ու բանտարկուած են 10 հոգի։ Ասոնք բանտից 5 օր առաջ դիմեր են տեղոյս Ռուսաց հիւպատոսին խնդրագրով մը, որու իսկական պատճէնը հետևեալն է։

Կարնոյ ռուս պետութեան
Բարեշուք հիւպատոսութեան

Վսեմափայլ Տէր։ Բարձր և վսեմափայլ ռուսական հովանին ընդունելու նկատմամբ աղերսագրեր մատուցած ենք Ձերդ բարերարութեանը. պատասխանն ստանալու համար ձեր քով երթևեկած ժամանակին՝ 2 անձ Բասենէն, 2 անձ կանէն, 1 մարդ Արշունէն, 1 մարդ Բլուրէն, 1 Զիֆլիկէն և 1 մարդ Դինարիգոմ գիւղէն տաճիկ կառավարութեան կողմէ ձերբակալեցանք, 13 օր է իվեր։ Մեզ բանտարկած են առանց ոևէ քննութեան և ոչ ոք չեն թողուր քովերնիս գալու. բոլորս ալ աղքատ և անօթի մնացած ենք. շարաչար կերպիւ կը նեղեն մեզ, հայհոյութիւն և այլն խօսքեր շատ։

Բարեգութ Տէր. թէրքի թէպպա (հպատակութիւն) խնդիրը մեր կայսրը հաստատած է, շատերուն իր հրամանաւ երթալու հրամանագրեր տուած է, ապա ուրեմն ի՞նչ պատճառաւ մեզ պէս խեղճ և անտէրնոյ կը բանտարկեն։

Ուրեմն, բարեխնամ՝ հայր, մենք ստորագրեալ բանտարկեալ ծառաներդ նախ Աստծոյ ապաւինելով, երկրորդ ձեր խղճին և խնամատարութեան սեղմելով՝ կը դիմենք ձերդ բարձրապատուութեան, հարկ եղած գործողութիւնն և աշխատութիւնն էնխայել մեզ նման թշուառ և կեղեքեալ անհատներուն և անյապաղ ազատել բանտէն։ Այս ամենը ամէն հրաման և կամք ձերդ վսեմութեանն է։ Մատչելով համբոյր ձեռքերուդ։

Ստորագրութիւններ՝

Յակոբ Պալայեան՝ Արշունեցի, Մնացական Առաքելեան և Նահապետ Աբրահամեան՝ Կանցի, Համբարցում՝ Զիֆլիկցի. Գրիգոր՝ Դինարիգոմցի, Գարեգին Աբրահամեան՝ Բլուրցի, երկու Բասենցիներ՝ Եղան գիւղէն։

14 ապրիլ, 1907
ԿԱՐԻՆ,

ԲԱՆՑ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՔ

ԱՏԱՆԱ, 8 մայիս

Ինչպէս որ յիշեցինք վերջին նամակներուն մէջ, Հալէպ գտնուող բանտարկեալ հայ քաղաքական բանտարկեալները դատապարտուած են թշուառութեան ու նախատինքի բանտարկեալ թիւրքերու և բանտային պաշտօնէութեան կողմէն։ Իսկ ոստիկանական և դատային պաշտօնեաները ամէն առիթ կը փնտռեն հայեր ձերբակալել ու դատապարտել տարիներու բանտարկութեան կամ ահագին կաշառքներ առնելէ վերջ միայն ազատ թողնել, իբրև սուլթանական մեծ շնորհ մը։ Անգութները վերջին օրերս դատապարտեցին տասնութ անմեղներ չորս տարուան բերդարգելութեան։ Թէպէտ չի կրցան յանցանք մը գտնել անոնց վրայ, բայց նորէն նահանգին կրօնամոլ ու վայրագ կուսակալին ազդեցութեամբ անմեղութիւնը յանցանքի կարգ անցուցին։

Այժմ մենք կը գտնուինք այն ժամերուն մէջ ինչ որ անցուցինք 1895-ին։ Այս օրերս Մարաշէն ճամբորդ ունենալով, հասկցանք իրենց վիճակը. խեղճ հայերը վախ ու դողի մէջ կը գտնուին, և հազիւ ազատուեր են սոսկալի կոտորածէն Ֆրանսական հիւպատոսին միջոցաւ։ Պատճառը դիւրին է հասկնալ։ Կառավարութիւնը պահեստի զինուորները զէնքի տակ առնել սկսելուն

պէս, իմաստուն անհատ մը կրակած է իրենց երեք երևելի մզկիթները. թէև հրդեհի առաջքը առնուած է, սակայն այդ իրողութիւնը հայերուն վերագրելով՝ պահեստի զինուորները չեն ուզեր քաղքէն դուրս գալ պատճառաբանելով. „Պէտք է որ մենք աղերնիս մնանք, որով պիտի կարողանանք պաշտպանել մեր հայրենիքն ու ընտանիքը. եթէ ոչ, հակառակ պարագային այս կեավուրները, որոնք հիմակուանէ միտում ունին աւրել ու կործանել մեր քաղաքը՝ աւելի ևս առիթ կունենան պսակելու իրենց նպատակը“։ Ահա այս վիճակի մէջ կը գտնուին այդ կողմի հայերը։

Կալով Ատանայի և շրջակայից գրութեան, որքան ալ վախ չի կայ կոտորածի, բայց տես որ կառավարութիւնը խիստ խորամանկութեամբ կը վարուի հայերու հետ. աւելի յարմար կը լինի եթէ ըսենք, թէ հոս կը թագաւորէ միջին դարու աւատական ձևը։ Հողերը բէյերու ձեռքն են և հայերը անոնց անվարձ աշխատաւորները, իսկ հայ վաճառական դասը ճզմուած է կառավարական պաշտօնեաներու բուռին մէջ. ով քիչ աչքի ընկնի, իսկոյն զրպարտութիւն մը, և խեղճը կը կորսնցնէ ամեն ինչ, մինչև որ կարողանայ ապացուցել իր անմեղութիւնը։ Գրեթէ հայոց ոչ մէկ իրաւունք կուտան, ինչ որ կը վայելեն թիւրքերը. երբէք չի թոյլատրուիր անոնց յարաբերութիւն ունենալ ուրիշ քաղաքներու հետ։ Իսկ ընկերական ժողովներ կամ հաւաքումներ խստիւ արգիլուած են հայերուն համար։

Այս նոր սիստեմը չի թոյլատրեր որ մեծ խռովութիւն և կամ կոտորած մը տեղի ունենայ, եւրոպական տէրութեանց ուշադրութիւնը գրաւելու աստիճան, բայց կ՚առաջնորդէ հայերը այնպիսի վնասներու ու կորուստներու, որոնք աւելի ծանր են քան կոտորածները։

ՆՈՐ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Բիթլիս, 4 Մայիս

Կարգ մը պատճառներ արգելք եղան ինձ քանի մը ամսուան համար ընդհատել թղթակցութիւններս... սակայն վրայ հասնող ազէտները կը հարկադրեն խզել։

Կը փափաքիմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել խնդրոյ մը վրայ, որ թէև կարևորութենէ զուրկ է, բայց կրնայ պաշտօնական հմմիտօֆիլ շրջանակներու մէջ համակրութիւն գտնել։ Շարժի բուռն արհաւիրքներու միջոցին, կուսակալ՝ Ֆէրիտ պէյը աշխատեց բռնութեամբ շնորհակալութեան հանրագրութիւններ առնել հայ հասարակութենէն. Ֆէրիտ պէյի կողմանէ խմբագրուած և հայ մեծամեծներու կողմանէ ստորագրուած հանրագրութիւնը ժամանակաւորապէս հետևեալ իմաստն ունի։

„Բիթլիսի հայ ժողովրդի հարստահարութեանց և կեղեքումներու մասին եւրոպական քանի մը թերթերու մէջ զրպարտութիւններ հրատարակուած են։ Օսմանեան արդարադատ հովանիին ներքև ապրող Բիթլիսի հայ ժողովուրդը երջանիկ և գոհ է։ Ամէն երկրի մէջ ալ անհատական ոճիրներ և եղեռնագործութիւններ կը պատահին. տիրող կառավարութեան պարտքն է պատժել ոճրագործները և արդարութիւնը ի գործ դնել. հետևաբար վերոյիշեալ եւրոպական թերթերու մէջ հրատարակուած զրպարտութիւնները չարագործ անձանց գործ համարելով՝ պաշտօնապէս կը հերքենք այդ հրատարակութիւնները, հաւաստելով թէ մենք հայերս կապրինք երջանիկ և գոհ Ն. Վ. Սուլթանի հայրախնամ կառավարութեան հովանիի տակ“։

Ստորագրութիւններ՝

Տէր-Բարսեղ Սարգիսեան՝ առաջն. տեղապահ,
Տ. Մեսրոպ քահանայ՝ կրօնական ժողովի կողմէն,
Յակոբ Բէնտէրեան և Ճէրճիս Գրգոյեան՝ քաղաքական ժողովի կողմէն։

Ֆէրիտ պէյի հրամանին վրայ վերոյիշեալներ ստորագրեցին այդ հանրագրութիւնը, առանց գիտնալու թէ ինչ հրատարակուած է եւրոպական թերթերու մէջ։ Ստորագրող աշխարհականները Ֆէրիտի լրտեսներն ու դաւաճան գործակալներն են։

Լահէի կօնֆէրանսի գումարման նախօրեակին, թիւրք կառավարութիւնը խիստ անհանգիստ կ՚երևի։ Ասկէ քանի մը օր առաջ, Ֆէրիտի հրամանով, մզկիթներու մէջ հաւաքեցան բոլոր թիւրք մոլլաներ, շէյխեր և մեծամեծ աղաներ։ Գումարման նպատակը եղած է խորհրդակցիլ „վերահաս վտանգին“ վրայ, մտածել, հանրագրութիւններ պատրաստել և կայսերական պալատ ղրկել, ապացուցանելու համար թէ իրենք գոհ են տիրող բէժիմէն, թէ այս երկիրը կեավուրներէն բարեկարգուելու պէտք չունի ևայլն։ Զանազան շշուկներ կը շրջին։

Պուլանըք գաւառի հայ գիւղերու գրեթէ բոլոր բնակիչները, ահագին բազմութեամբ, հոս կառավարութեան դիմեցին՝ պատմելով իրենց վիշտերն ու կրած զրկանքները բուն իսկ վալիին և խնդրագրերով պահանջեցին որ իրենց անցագիր տրուի կովկաս գաղթելու։ Երկու քահանայ և երկու գիւղապետ ընդունուեցան կուսակալէն ու բացէն խօսեցան անոր՝ կառավարական պաշտօնէից և զապթիէներու անտանելի արարքները չէրքէզ գաղթականներու և քիւրդերու անիրաւութիւնները, թէ ինչպէս այս վերջիններն հայերէն բռնութեամբ կը տանին խոտ ու յարդ առանց վճարի, անօթի թողլով հայերու անասունները, թէ ինչպէս թոնրի կողքէն կիսեփ հացը կը քաշեն կը տանին, որ իրենց զաւակներու սնունդը պիտի լինէր, թէ ինչպէս չէրքէզներ ձեռք ձգած են հայ աղջիկներ և կիներ, թէ կեանքը անտանելի է իրենց համար, թէ իրենք վճռած են անպատճառ գաղթել։ Ֆէրիտ պէյ դիւային ժպիտներով հիւրասիրած էր զիրենք, բայց երկու ժամ վերջ, անասուններու պէս ծեծել տալով՝ 300 է աւելի գիւղացի երիտասարդներ քաղքէն արտաքսել տուաւ։

Տեղւոյս ռուսաց հիւպատոսը, Մ. Հիրքով, կը քաջալերէ հայ գիւղացիները կովկաս գաղթելու։ Ախլաթի գիւղացիներն ալ սկսեր են քաղաք գալ և անցագրի համար խնդրագրեր տալ թիւրք կառավարութեան որոշումը յայտնի չէ. կը յուսանք թէ պիտի մերժէ։ Այս կրիտիքական վայրկենին ամենակարևոր խնդիրն է արգիլել այս միահամուռ գաղթականութիւնը. հակառակ պարագային մեր հայրենիքը քիչ տեսնուան մէջ անապատ պիտի դառնայ։

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԳԱՂԹԷ ՑԱՐՕՆՑԻՆ

Ցաճախ հարցումներ կ'ըլլան, թէ ի՞նչ պատճառներէ դրդւած տարօնցիները կը դիմեն պանդխտութեան և թէ ստուգի՞ւ գաղթելու տրամադիր են։

Պատճառները, որոնք տարօնցին մղած են գաղթի այս նոր հոսանքին՝ ծանօթ են արդէն, սակայն աւելորդ չէ անգամ մը ևս քանի մը տող և համառօտակի թւումն ընել, շեշտելով մեր ցաւերուն էն ծանր կէտերը։

Նկատելով, թէ այս կողմերում կառավարչական կործանող սիստեմի երեսէն հայ ժողովրդի համար կեանքի ապահովութիւնը բացարձակապէս վերցած է։

Թէ աննկարագրելի ջարդերէ վերջ պարբերական կոտորած, սպանութիւն կը շարունակւին և սովորական դարձած են ամէն տեղ և ամէն կողմ։

„Թէ ամէն կարգի ոճրագործներ անպատիժ, անպատասխանատու են։

„Թէ պատիւ չէ մնացեր մեր կիներուն, մեր աղջիկներուն։

„Թէ հաւատափոխութիւնը կը ծաւալի ամէն տեսակ ձևերու տակ։

„Թէ բանտի մղձաւանջով կը տանջւինք ամենքս ու բանտերը լի են անմեղներով, որոնք իրար ետևէ կալանաւոր ու վշտահար կը մեռնին։

„Թէ ամենէն անկարևոր չարախօսութիւն մը գօրաւոր է մինչև բանտ, մինչև մահ առաջնորդելու մեզմէ ամէն մէկը։

„Թէ բէկը չարաչար կը կեղեքէ, կը տանջէ և տասանորդին տեղ մէկ քառորդ, նոյնիսկ մէկ երրորդ կը խլէ։

„Թէ հարկահաւաքը եռապատիկ աւել կը կողոպտէ ու կառնէ դժոխային տուրքը։

„Թէ հարկահաւաքի գագան արբանեակն՝ սալաֆտարը մէկի փոխարէն հնգապատիկ կը խլէ ու կը գրաւէ տունը, տեղը, հողերը և այլն։

„Թէ խուզարկութիւններով գիւղեր կը քանդւին, մարդիկ կը սպանւին, կանայք կը բռնաբարւին, տուներ կը թալանւին, ժողովուրդը կը ցրւի...

„Թէ քիւրդեր յաւիտենապէս կը կեղեքեն, կը փճացնեն և կ'իւրացնեն հայերու ամէն տեսակ, նոյնիսկ նեւրական սրբութիւնները։

„Թէ քիւրդ ու թիւրք պէյեր, աղան ու վայրագ համիդիէները բռնի հողերը կը գրաւեն, ինչքերը կը յափշտակեն, ստրկօրէն մեզ իրենց կը ծառայեցնեն, և ի հարկին կը սպաննեն և այլն և այլն։

„Թէ պարտքերու և տուրքերու համար ոգեպահիկ իրեր, արհեստի գործիքներ իսկ կը յափշտակւին։

„Թէ հայաբնակ գիւղերու մէջ թիւրք գաղթականներ կը գետեղւին, կամ հայոց հողերը բռնի առնելով անոնց կը տրւին։

„Թէ դատարաններու մէջ դատապարտութիւն միմիայն հայերու բաժին է։

„Թէ ընդհանրապէս կողոպտուած, ապրուստէ զրկուած են քաղաքացին ու գիւղացին միանգամայն։

„Թէ փակուած են հայերու դէմ սահմանագլուխներ, վաճառաշահ քաղաքներ։

„Թէ գիշեր ու ցերեկ արհաւիրքի ու սարսափի մէջ, մեր տուները, բոլոր ունեցածները փճացած ըլլալով, ոչ ևս հնարաւոր է այս պայմաններու մէջ կեանք, ապրուստ, հանգիստ գտնել ու վայելել։

„Թէ տարիներէ ի վեր մեր կատարած բազմադիմի գանգատներուն, բողոքներուն, զոհողութեանց հանդէպ ոչ մէկ բարեփոխութիւն չեղաւ և ընդհակառակն աւելի վատթարացած ըլլալով մեր վիճակը, կտրեցինք մեր յոյսը և հակառակ մեր ցանկութիւններուն, որոշեցինք թողուլ թիւրք պետութեան հպատակութիւնը, մեր հայանիւրական սրբութիւնները, գաղթելու համար... օտար երկիրներ...

Ահա ասոնք են մեր ցաւերուն ահաւոր մասերը.— ահա այս է մեր պատասխանը։

ՎԷՐԿԻ ԵՒ ՔԷԼԷՓԻՐ

ԿԸՉԼՋԱՑ, 20 մայիս

Կառավարութեան վէրկին մի անտանելի բեռ եղած է մեզ։ Ինչպէս յայտնի է, ամէն ինչ թալանի տւինք՝ եզ, ոչխար, գոմէշ. ապրիլն անկարելի է. մեր աշխատանք քիւրդ կուտէ, իսկ զափթիէներու արածի չափն անցած է, տուն կը մտնին, թէ որ մէկ չափ կորեկ ունիս, էն էլ կը տանին և թէ որ լաթ մը ունենաս, էն էլ կը ծախեն, տունից տեղից, հողից, մալից զրկել կուզեն։ Իր հաւաքած մէկ թագսիտի չափ արդէն մէկ զաբթիէն կուտէ գեղից, օրը 2 հաւ, 1 նուկի եղ, 10—15 ձու, 1 օխայ ալիւրի հետ խառնած կերակուր պիտի շինել. ծեծ, հայհոյանք մէկ կողմ թողունք. մէկ ձուի համար գլուխ կը կոտրէ, ձիու կերն էլ իրենի պէս լաւ տեսակէն ըլլալու է. օրէն 2 խուրձ խոտ (այն էլ մաքուր առոյտ լինելու է, ուրիշ խոտ կերցնել անկարելի է), 1 կօտ գարի։ Մեզ պէս խեղճ գիւղացիների համար զափթիէն մեծ պատիժ է։ Ցայտնի է որ մեզմէ շատեր այս դառն վիճակին չը դիմանալով, թողուցին իրենց տուն, տեղ, մալ, հող, փախան և հիմայ մէկ քիւրդ պէյի մը և կամ քիւրդ խոլամի մը ձեռքի տակ ծառայ եղած են՝ իրենց ընտանիք սովէն չը մեռցնելու համար։ Այս զուլումներէն զատ զաբթիէն իր պահանջ կառնէ, ինչ էլ որ լինիս։ Դիւրին միջոց կայ արդէն քիւրդ կամ թիւրք հարուստ մը պատրաստ է „սալաֆ" տալ և մէկի տեղ երեք-չորս առնել, սալաֆջին դրամ կուտայ զաբթիէյի ուղածին չափ և գիւղի վրայ կը գրէ սալաֆ 1-ը՝ 4։ Մէկ երկու ամսէն կուգայ իր սալաֆը հաւաքելու. երբ մէկ չափ ցորեն 20 ղրուշի կը ծախւի, նա երեք չափ կը պահանջէ, այնպէս որ գիշեր ցերեկ դառն քրտինքով վաստակած մեր կալը կալէ, կը սրբէ, իր անիրաւ իրաւունքը կառնէ նորէն զափթիէյի օգնութեամբ, միակ թիակ ու ցախաւել կը մնայ խեղճերիս։ Մենք մեր վաստակէն այսպիսով կը զրկւինք, մեր օրերէն շատը անօթի կանցունենք. ո՞րտեղէն կարող լինինք տէրութեան պարտք ամբողջապէս տալ, չէ՞ որ ունեցած վաստակէն տուրք պէտք է առնել։ Գիշերներ մերկ գետնի վրայ կը քնանանք, ցերեկներն ալ դառն աշխատութեամբ կանցունենք ու նորէն չենք կրնար մեր օրական հաց ձեռք բերել։

Այս ամէնէն զատ, քիւրդն ալ իր համար քէլէփիրի ետևէն կը պտտի։ Մէն մի քիւրդ իր համար պէկ եղած է, որոյ առաջ զրուցել անկարելի է. նա էլ մաքուր կերակուրներ ուտելու վարժւեր է, հաւ կտրել, ձուածեղ շինել, փոխինտ անել՝ մեզ պէս խեղճ հայ գիւղացիների հաշւին՝ արհեստն է. ծեծելու համար մեծցած է ինք. այն բան որ իր աչք բռնած է, անկից անոր բաժին մը տալու ես. այն օր քու մահուան օրն է, երբ ըսես. „չունիմ, ո՞րտեղէն տամ", սպառնալիք կուտայ ու կերթայ, քանի մ'օրէն յետոյ կամ տունդ կը թալանէ կամ եզներդ ու ոչխարդ դաշտէն կը տանէ և կամ հորդ կը հանէ։

Հետզհետէ նոր-նոր բեռներ կը դնեն մեր վրայ, եղածը քիչ էր որպէս թէ. մի կովի համար, որ 40 ղրուշի չի ծախւիր, 10 ղրուշ տուրք պիտի տալ, եզի համար նմանապէս։ Այսպէս զուլումներ օրէցօր կաւելնան,

տուրքեր կը ծանրանան. խեղճ ժողովուրդ ամէն կողմէ ճնշուած՝ չէ կարող շունչ առնել։ Քանի որ իր վաստակը իրը չէ, իր մալը քիւրդ կը տանէ, իր արտը քիւրդ կը զավթէ, խեղճ գիւղացին կորեկ հացի, տարեկան հացի կարօտ է, հանգիստ շունչ առնել չը գիտեր, քիւրդին օլամ կանէ, քիւրդի մշակին նոյնպէս։ Այս զուլումներ քաշել չի գար. եթէ այսպէս շարունակի, պարտաւորուած ամէնքն ալ իրենց մալից, հողից պիտի զրկուին, պիտի փախին, քանի որ քաշելու բան չէ։

ԿԱՌԿԱՌԻ ՎԻՃԱԿԸ

(Պատօնական գրութիւն, ուղղուած Կ. Պոլսի պատրիարքարանին)

Ամենապատիւ...

Թէպէտ յարդ քանիցս գրած ու կրկնած ենք Կառկառ գաւառի թշուառ և անտէրունչ ժողովրդեան մասին, բայց ամէն անգամին ծագած նոր ապէտ մը կը սարսիպ դարձեալ գրել և յիշեցնել Ձերդ Սրբազնութեան, անոնց անասելի դրութիւնն ու կացութիւնը, որուն այլևս չը կարենալով դիմանալ՝ յուսահատ ժողովուրդը կը ջանայ՝ մահն աչքն առած, փախչիլ իր մայր-երկրէն և փնտռել մի այլ տեղ, ուր կարենայ գտնէ մի բոպէ անախ ու անվախ հանգիստ քուն մը քնանալ, գտնէ մի օր կուշտ ուտելու չափ հաց ձեռք բերել։

Վերջերս մինչ խեղճ կառկառցին սովի անդութ ճիրաններին մատնուած կը տաղնապէր, կառավարութիւնն ալ միւս կողմէն, մի նոր պատրուակով էլ աւելի սաստկացուց անոր տագնապն ու տառապանքը, կարծես վերջ տալ ջանալով նրա ձանձրալի գոյութեան։

Նա պատճառելով թէ Հալս գիւղի մէջ յեղափոխականներ երևցած են, մի օր յանկարծակի յարձակուելով գիւղի վրայ՝ կը վառէ զայն և կը կողոպտէ ամէն ինչ, չը նայած որ յեղափոխականի ոչ մի հետք չէ երևցած հոն, ոչ ընդհանրում տեղի ունեցեր է, ոչ յեղափոխական տեսնուեր է և ոչ ալ կասկածելի գրութիւն կամ զէնք մը բռնուեր է. միևնոյն սոսկ կասկածանքի հետևանքով աւերումի ենթարկուեր է այս անտէր գիւղը։

Ալ երևակայել կարող էք, թէ ժողովուրդը ներկայիս մէջ ի՞նչ անապահով գրութեան մէջ կապրի նեղելով մի կողմէն սովէն, միւս կողմէն կառավարութեան պաշտօնէից ապօրինի և զեղծ ընթացքներէն, և օրէցօր ստեղծուած նոր նոր մահաբեր պատրուակներէն։

Հալս գիւղէն տարուած և յափշտակուած անասնոց և ուտեստից ցուցակն է հետևեալը՝ 42 եզ և կով, 7 ոչխար, 40 վանաչափ ցորեն։ Ցնայեն ամբողջ կարասիներ տարեր և ապա գիւղը վառեր են։

Կաթողիկ. տեղապահ
(Սեբաստիոյ)

1907, 13 մայիս
Աղբամար

ԽԻԶԱՆ, 2 մայիս

Ջարգերի բաղդակործան թաւականներից առաջ իւրաքանչիւր հայ գիւղ ունէր 800, 1000, 1200 ոչխար, որով իր նիւթական պէտքերը գոհացնելէն զատ, նաև քիչ-շատ տնտեսում էր ապագայ սև օրուան համար, բայց այժմ չունի ոչինչ։ Արդեօք այս երևոյթը վերագրելու է ծուլութեան կամ անհոգութեան. ո՛չ երբէք. արժէ խոստովանիլ որ հայ ժողովուրդը երկրագործութեան ու անասնաբուծութեան տեսակէտից ժրաջան ու գործունեայ մի տարր է հանդիսանում. նոյնիսկ կարող է երկու կամ երեք տարուայ խաղաղ ընթացքում նոյն առաջին հօտերը կազմել։ Սակայն շղթայազերծ մարդ-գազաններն ու ընչաքաղց հրոսակները լեռների կատարներից, գիւղերի ախոռներից աշկարայ քշում տանում են մշտատանջների ոչխար տաւարները առանց սպասելու մէկը երկու լինելուն. հապա այգիներ և այլն, բոլորն էլ ամայի ու աւերակ են դարձել բարբարոսների վարմունքից։ Արդեօք նկարագրել թէ ինչեր է անում Շէյխ Սէյիդ-Ալին։ Քանի-քանի մարդոց գլուխները կերաւ, գիւղերը ամայեց, հողերն ու կալուածները գրաւեց, ընտանիքնին մուրացկանութեան տխուր բաղդին մատնելով՝ վանքեր ու եկեղեցիներ քար ու քանդ արեց, քարերից փառաւոր շէնքեր շինել տալով սոսկ հայերի աշխատութեամբ։ Գարունը գալուն պէս իւրաքանչիւր գիւղից 10, 20 կամ 30 հոգի բռնութեան տակ շաբաթներով նրա այգիներն են փորում, անօթի, ծարաւ, մերկ. ապա հազիւ մի քանի օր հանգիստ առած՝ վերստին գնում են այս անգամ նրա խոտը հնձելու, որին յաջորդում են պարբերաբար ցորենի, գարնցանի, կորեկի հունձը, որ ամբողջովին այդ տօթագին օրերում քաղում են ու պատրաստում նորից սոսկ հայերի քրտնաթոր աշխատանքով. իսկ եթէ սոյն աշխատանքին մէկն ու մէկը չուզէ մասնակցիլ, արդէն զուլումների դուռը բաց է նրա համար. տները մտնելով թալանում են կահկարասիներ, ծեծում են ու չարչարում կիներ ու տղաներ՝ ժանդարմէական թուքի ու մուրի ենթարկելով տառապանքի ծոցից ծընուած այդ իրաւազուրկ տարրը, որ սև է հագեր։

ԲԻԹԼԻՍ, 5 մայիս

Մարտ 16/29-ի ուրբաթ օրուան և յետագայ քանի մը օրերու երկրաշարժի ահռելի ցնցումները ձեզ ծանօթ լինելու են օտար թերթերէն և հիւպատոսական տեղեկագրերէն։ Բուն Բիթլիսը և շրջակայ հայաբնակ գիւղերը քանդուեցան այդ սոսկալի ցնցումներէն. քաղցն ու մերկութիւնը կարելի է երևակայել, նկատի ունենալով նիւթական ամենայետին միջոցներուն հասած արդէն թշուառ ազգաբնակութեան կացութիւնը։ Շարժին հետևանքով ցարդ քաղաքին մէջ մեռած են 15 հոգի և վիրաւորուած 20, 100-ի չափ տուներ խարտ փլած ու քանդուած, իսկ տուներու 75% խախտուած է ու անվստահելի։ Դժուար է գտնել բոլորովին ապահով տուն մը։ Առաջին ուժգին ցնցումէն անմիջապէս յետոյ, բովանդակ քաղաքը դուրս թափուեցաւ, քուրջերէ, փսիաթներէ պատրաստուած՝ այսպէս ասած՝ վրաններու տակ։ Շարժի օրերը նմանը չը տեսնուած սաստկութեամբ ձիւն տեղաց, յետոյ անձրևը յաջորդեց երեք-չորս օր անընդհատ. անպատսպար, մերկ ու հացակարօտ ժողովուրդի վիճակը անտանելի է բառին ամենէն լայն առումով։ Շարժը կը շարունակի դեռ, ամէնքը բացագեայ կը բնակին այս խիստ եղանակին մէջ։ Անձրևը կը շարունակէ ընդհատաբար, ուտելիքն ու վառելիքը բարձրացած են քառապատիկ գնով։ Ապիկար կառավարութիւնը և մանաւանդ հրէշ Ֆէրիտ պէյը ոչ մի քայլ չարին մեղմելու ժողովրդեան թշուառութիւնը։ Ամերիկեան և գերմանական միսիոնարներ օրական 15 լիրայի չափ դրամ կը բաշխեն, սակայն ի՞նչ կարժէ

կաթիլ մը սփոփանք թշուառութեան ծովի մը մէջ։ Շրջակայ Խուլթիկ (300 տուն, հայաբնակ) Բարխանդ, Գոմս, Խըմպլզուր, Ամպ-կօրվու հայաբնակ գիւղերը քանդուած են մեծ մասամբ։ Գիւղացիները, ա՛լ աւելի չքաւոր ու թշուառ, պարզապէս անպատսպար՝ ձիւնի վրայ կապրին, ոչ ուտելիք ունին, ոչ հագուստ։ Ընչուշտ արտասահմանեան հայութիւնը չը պիտի մոռնայ իր թշուառ եղբօր ներկայ անտանելի կացութիւնը և անոր կոչին արձագանք պիտի տայ իր ամբողջ ուժով։

ԴԻԱՐԲԵՔԻՐ, 7 մայիս

Մշոյ դաշտէն և Պասնոյ գիւղերէն սովելոց հոսանք մը սկսած է դէպի հոս։ Այդ տեղերու հունձքերը փճացած են գրեթէ, եկած դոյզն արդիւնքն ալ կառավարութիւնը գրաւած է տուրքերու փոխարէն, որով թշուառ գիւղացին անօթութենէ չը մեռնելու համար՝ ստիպուած է թողուլ իր տունն ու օճախը և գաղթել այլուր։ Ցարդ մօտ 500 տնւոր մեր վիճակը հասած են և դեռ կը շարունակեն հասնիլ։ Մարդուն սիրտը կտոր-կտոր կ'ըլլայ հանդիպելով անոնց ամէն ժամ փողոցները, եկեղեցւոյ դուռը, շուկան և ամէն տեղ, անօթի, մերկ, բոպիկ և անպատսպար, որոնք ողորմութիւն կը խնդրեն, գթութիւն կը հայցեն անցորդներէն։ Նորեկներէն շատեր չը գտնելով պարապ խորշ մը, ուր կարենային պատսպարուիլ՝ գիշերները բացօդեայ կը մնան ցրտին դէմ։ Բարեբախտ կը համարուին անոնք, որ ախոռի մը անկիւն գտած՝ անասուններու շնչով կը տաքնան։ Տալորիկցի կին մը տեսանք, որ դառնապէս կուլար. պատճառը հարցուցի, յայտնեց թէ ինքը երկու փոքրիկ աղջիկներ ունէր, զորս սովէն ազատելու համար այս կողմեր կը բերէր. անոնցմէ մին սաստիկ անձրևէն և ցրտէն կը մեռնի։ Կարծես քիչ ըլլար այս պատուհասը, զոր ամբողջացնելու համար, Պաթմանի կամուրջին մօտ խումբ մը քիւրդեր իր դէմը կ'ելլեն և անխղճօրէն կը խլեն իր մարմնոյն մերկութիւնը ծածկող հին ու մին հալաւները և իր ամբողջ հարստութիւնը կազմող պատառոտուն վերմակը, զոր իր շալակը կը կրէ եղեր։ Շատախէն հոս գաղթողները կը պատմեն թէ տեղական կառավարութիւնը կ'աշխատի հետզհետէ հանել հայ գիւղականներն, անոնց տեղը թիւրք գաղթականներով լեցնելու համար։

ԿԱՐԻՆ, 22 մայիս

Նախորդ նամակս գրած էինք թէ շատ տխուր է Խնուսի, Մշոյ գիւղացոց վիճակը. բռնի կը հանեն խեղճերը իրենց բնակավայրերէն, ուր Ռուսաստանէն եկած թուրք գաղթականները կը բնակեցնեն. խեղճերը մերկ, անօթի, անօգնական հոս կը լեցուին բողոքելու, խնդրելու, բայց ինչ օգուտ։ Ահա խնուսցոց կուսակալին ներկայացուցած խնդրագրին քանի մը գլխաւոր կէտերը.

ա. Կը բողոքեն քիւրդերու գործադրած հարստահարութեանց դէմ, ըսելով՝ թէ բռնութեան տակ իրենք ստիպուած են երթալ մըշակել անոնց արտերը, ցանելէն սկսած, մինչև ցորենի շտեմարան լեցնելը. ձմեռ ժամանակ անոնց անասունները իրենց խոտ ու յարդով տներու մէջ խնամիլ ստիպուած են և եթէ հորթ մը սատկի, անոր տեղ կով մ'ալ տալով չեն կրնար ազատիլ ևայլն։

բ. Կը բողոքեն անօրինակ բռնութիւնով հարկեր հաւաքելու դէմ։ Կը գտնեն և կը ծախեն տան մէջ ամէն բան ինչ որ ձեռքերը իյնայ գիւղի մէջ իրենց պարտքը վճարել չը կարողացողներու տուրքը կը գանձեն գրացի փոքր ի շատէ միջոց ունեցող հարևաններէն։

գ. Կը բողոքեն թուրք գաղթականներու հայ գիւղերու մէջ գործած հարստահարութիւններու դէմ։ Խնուս 360 գիւղ ունի, կ'ըսեն բողոքագրի մէջ, որոնցմէ 25-ը միայն հայաբնակ են և եկած գաղթականները առանց բացառութեան լեցուցեր են հայ գիւղերը. հայ ընտանիքները բռնութեամբ իրենց տներէն դուրս կ'ընեն, տեղը գաղթականներ դնելով. այն մարդոց, որոնք Ռուսաստան գաղթեր են տարիներէ իվեր, կալուածները կը խլեն իրենց անտէր մնացած հողեր և թուրք գաղթականներուն կը յանձնեն, միչդեռ հողերու ժառանգորթները ներկայ են. եկեղեցիներ կը կողոպտուին թուրք գաղթականներու կողմէ, աղջիկներ և կիներ կ'առևանգուին և աչքի ընկնող երիտասարդներ կ'ըսպանուին ևայլն։ Բողոքողները կ'ըսեն, որ իրենք պատրաստ են տեղին վրայ ասոնք և ասոնց նման հարիւրաւոր դէպքեր հաստատել։ Կուսակալը, ինչպէս միշտ, նոյնպէս և այժմ խոստացեր է վերահասու ըլլալ և պէտք եղածը կարգադրել, այս ինքն յանդիմանել այն պաշտօնեաները, որոնք այնքան անճարակ գտնուեր են այդ բողոքարկուներու ձայնը լսեցնելու, անոնց կեանքը վերջացնելու գործին մէջ։

ՍՊԱՐԿԵՐՏ, մայիս 24

Չ'կայ սիրտ մը, որ դիմանայ այն սոսկալի աղէտներուն՝ որոնց ենթակայ է ներկայիս Սպարկերտ գաւառը։ Նա իւր ամբողջութեամբ մի արգահատելի պատկեր կը ներկայացնէ. քաղց, աղքատութիւն, թալան ու կողոպուտ իրենց հմայիչ տառապանքներով պատած են նրան և խեղդամահ ըլլալու աստիճանին են մօտեցուցեր։ Մէկ կողմէն աւարատենչ և ընչաքաղց քիւրդ տարրերը հրոսակային խումբեր կազմած՝ կը շրջին գիւղէ գիւղ և ձեռքերնին ինկած կահ կարասիք, անասուն կը յափշտակեն կը տանին փոխան պարտքի. միւս կողմէն՝ պէյն ու վաշխառուն կը շարունակեն թշուառ ժողովրդի արդար վաստակի անխիղճ շահագործումն, և անդիէն աւելի սոսկալի և աւելի խիստ կերպով զինք կաշկանդեր է տէրութեան խիստ պահանջը՝ յետնեալ տուրքերու անմիջական հաւաքումը։ Տակաւին ոստիկան մը գիւղէն դուրս չ'ելած՝ միւսը կուգայ նորանոր սպառնալիքներով և անասելի ծեծերով։

Չ'անցնիր օր մը որ տեղի չունենայ այդ մարդ-գազաններու բարբարոսութեան արտայայտութիւնն խեղճ, հիւանդոտ և բոլորովին ճնշուած ու քամուած մասսայի վրայ, որ անտէրութեան ու խեղճութեան մէջ կը տապլտկի ինչպէս ողորմելի ճճի, զոր ուզողը կը ճմլէ, կը

չարչրկէ. Սև՛ ճակատագիր։ Որքան որ ուշադրութեամբ քննես ատոնց կեանքը և աւելի խորեր թափանցես՝ նոյնքան դա՞ռն ու սև իրողութիւններ ի յայտ կը բերես։ Այդ անմեղ զոհերի աղէկտուր հեծեծանքները լսելով չէ կարելի չը կսկծալ և չ'մորմոքիլ։ Ատոնք իրենց ջլուտ ձեռքերով հողը կը մշակեն և այդու յառաջ եկած արդեամբ տէրութեան կաշառակեր պաշտօնեաներու քսակները կը լեցուին միայն, իսկ իրենք՝ արիւն քրտինք թափողներն՝ անօթի կը տուայտին. ի՞նչ անարդարութիւն, ի՞նչ անխղճութիւն։ Եւ սակայն այդ աւազակաց որջերուն մէջ ապրող ժողովուրդը յօժար է տանելու այդ ամէն արհաւիրքն ու տանջանքները, եթէ իրեն տրուի գէթ չոր հաց մը։ Նա ագ ալ չունի։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, 2 յունիսի

Հարկահաւաքութիւնը կը շարունակուի իր քայքայիչ թափով. վայրագութիւններ հետզհետէ կ'ընդլայնուին և կը տարածուին աւելի հեռուները—Վասպուրականի ամենամոռցած անկիւններն իսկ։ Շատախ, Նորտուզ, Կառկառ, Գաւաշ, Կարճկան, Մոկս, Արջակ, Բերկրի և այլ գաւառներ ենթակայ են անլուր սարսափներու։ Սովն ալ միւս կողմէն պակասը կը լրացնէ։ Ժողովրդի անտանելի քայքայումը աննկարագրելի է։ Շատ ընտանիքներ միայն խոտով ու արմտիքով կը կերակրուին։ Սնունդի պակասութեան հետևանքով հիւանդութիւններ մեծ չափեր առած են. մարդիկ երախաներ—բոլորն էլ գունատ-նիհար, միկը ծուռ, բոբիկ ակլոր գռնէ գուռ կը թափուին մի կտոր չոր հաց մուրալով։

ՎԱՆ, 4 յունիս

Աղթամարէն վերադարձող ոստիկաններ՝ լցած Գաւաշ և Կարճկան գաւառները, խիստ խուզարկութիւններու ենթակայ են, իբր թէ հոն ապաստանած ֆէդայիներ գտնելու համար։ Գիւղացիներու դրութիւնն ալ անտանելի է։ Ապաղայի դաշտը մեծ քանակութեամբ զօրքեր խրուած են, որպէս թէ կարգ պահպանելու և քիւրդ ցեղերու միջև սպասող ընդհարումներու առաջն առնելու համար։ Բայց իրօք անոնք միայն հայ ֆէդայիներ պըրպտելու են ղրկուած։ Գործը չափազանց փութկոտութեամբ առաջ կը տարուի, գլխաւորապէս այն վախէն դրդուած թէ, քիւրդեր միացած հայ ֆէդայիներու հետ՝ ընդհանուր ապստամբութեան կը պատրաստուին։

Բանտարկուած են Նոր գիւղի ռէս Մինաս և մի քանի գիւղացիներ, որովհետև անոնք յանդգնութիւն ունեցած են բողոքելու թահսիլտարներու վայրագութեանց դէմ։

Բանտարկութենէ արձակուեցան կեդրոնական դպրոցի ուսուցիչներ Մէլօեան և Մանուկեան. կառավարութեան կարգադրութեամբ անոնք այլևս ուսուցչական պաշտօն չը պիտի վարեն։ Ասոնց ընկերներէն՝ Շալճեան դեռ կը դեգերի բանտին խորքը։

ԿՈՎԿԱՍ

ԲԱՆՏԱՅԻՆ ՈՃԻՐՆԵՐ

ԲԱԳՈՒ, յունիս 25

Վաղուց գիտէք որ Ռուսաստանի երկրորդ Դուման էլ ցրուեց։ Այդ Դուման, բացուած օրից իսկ՝ ցրուելու „Դամոկլեան սուրը" կախուած ունէր իր գլխի վերևը. սակայն մենք՝ գաւառացիներս, երկու օր առաջ հաստատ փաստը ունէինք՝ որ դուման ցրուելու են։

Անցեալ տարի, առաջին Դումայի ցրուելուց՝ առաջ՝ զինուորական հետիոտ ու ձիաւոր պահակների խմբերը աւելացան, առանց որևէ հարկեցուցիչ պատճառ ունենալու, և մի քանի օր յետոյ Դուման ցրուեց։ Այս տարի էլ նոյնը կատարուեց աւելի բնորոշ կերպով։ Ոստիկանական և զինուորական ջոկատներ, խմբակներ միշտ էլ կան և միշտ էլ շրջում են։ Մինչև իսկ, ոստիկանները չորսը-հինգը միասին են կանգնում՝ զինուած հրացաններով։ Սակայն վերջերս կարգադրուեց, որ բոլորը էլ ուիները հրացանների ծայրերին անցկացրած կաղմ ու պատրաստ լինին և ամեն մի խմբակ մէկը միւսից որոշ տարածութեամբ հեռու դասաւորուած պիտի շրջէ։ Այս վերջի ձևը, երևի, նրա համար որ յարձակում կրելու դէպքում, խմբակների անդամները միանգամից չը շրջապատուեն կամ չը կոտորուեն։ Վերջապէս այս „նորամուծութեան" իրագործման երկրորդ օրը՝ Դումայի ցրուած լինելը իրականութիւն էր։

Քանիերրորդ ամիսն է որ զինուորական դրութիւնը անուանապէս վերացուել է քաղաքից ու շրջականներից, բայց ուժեղացրած հսկողութեան դրութիւնը պահուում է և մէկի վերացուելու ու միւսի պահուելու մէջ՝ մեզ համար ո՛չ մի տարբերութիւն չը նշմարուեց։ Վերացուեցին պատերազմա-դաշտային դատարանները, բայց նրանց տեղ նոյն կանոններով գործում են զինուորական դատարանները։ Բացառիկ իրաւունքները, կամայականութիւնները, որոնք ռուսական պետութեան մէջ գտնուող համարեա բոլոր նահանգների այժմեայ վարչական և զինուորական պետերի առանձնայատուկ „արտօնութիւններն" են և սրանց շնորհիւ ամեն մինը իր շրջանի լիակատար տէրն է, շարունակում են անսանձ օրէն։ Գողութիւնը, յափշտակութիւնը, սպանութիւնները շարունակուում են սանձարձակ՝ օրուցերեկով, հրապարակով։ Զափազանց բնորոշ երևոյթն այն է, որ այդ կարգի ոճիրներ գործուած բոպէներում ու վայրերում՝ ոստիկանական ու զինուորական ջոկատներից ոչ մէկը չէ երևում փողոցների մէջ։ Ոճիրը գործուում, ոճրագործը անհետանում է, ու ապա միայն ոստիկան, ոստիկանապետ, զինուոր, զօրապետ և այլն խռնուում են դէպքի վայրում, և շատ անգամ ձերբակալում բոլորովին անմեղներին, դէպքի վայրից սարսափով փախչող պատահական անցորդներին։

Ու բանտերը լիքն են այդպիսիներով, որոնք իբրև քաղաքական յանցաւորներ, ենթակայ են բանտային սոսկալի ըէժիմի։ Այնտեղ ռուսական „կամարիլլայի" սովորական դաւադրութիւնները գործ են դրուում քստմնեցուցիչ ձևերով ու չափերով։ Դուք տեղեկացել էք անշուշտ Ռիգայի և այլ բանտերի մէջ գործուած ոճիրների մասին, որոնք Դումայում ամուլ հարցապնդումների այնքան աղմուկ բարձրացրին։ Այստեղ Կովկասում փաստերը աւելի դառն են։ Ոճիրների գլխաւոր հեղինակը ինքը բանտային պաշտօնէութիւնն է։ Ոստիկանութեան, պահպանութեան բաժանմունքի պակաս թողածները բանտային պաշտօնէութիւնն է լրացնում։ Այստեղ բացի պաշտօնական, „ըստ օրինի" կատարուածներից, կատարուում է նաև այն՝ ինչ դուրսն էր տեղի ունենում։ Բանտարկեալներին բաժանում են

դասակարգերի, ազգերի, ցեղերի և միմեանց դէմ լարում։ Բանտարկեալների անհաճոյ տարրը, ենթադրուած կրօտոլնիկները, ամենօրեայ սարսափի տակ է պահում բանտային մի այլ, հաճելի տարրի կողմից, և այս վերջիններին զինելու համար ամեն կերպ յարմարութիւններ են ստեղծւում բանտային վարչութիւնների կողմից։ Եւ Բագւի բանտում ամենից աւելի տուժողը, ինչպէս Կովկասի այլ քաղաքների բանտերում, դարձեալ հայկական տարրն է, որի դէմ ամենաբուռն ատելութեամբ լարել են ռուս և մահմեդական բանտարկեալներին։ Տեղի ունեցան արիւնհեղութիւն, սպանութիւններ, կան և վիրաւորուածներ. փաստը չափազանց վրդովեցուցիչ էր, բայց բողոքելու համար օ՛չ մի հնար ու միջոց չը գտնուեց։

Տեղական մամուլին արգելեցին յիշատակել իրողութիւնը. դիմում եղաւ Կովկասի մայրաքաղաքի մամուլին, այն տեղ էլ չը համարձակուեցին. դիմեցին Ռուսաստանի մամուլին, դարձեալ արձագանք չը գտաւ, և այժմ բանտից ամեն օր հասնող լուրերը հաղորդում են՝ թէ ոճրագործները նոր դէպքեր են պատրաստում...

—

Յուլիս 4

Հաւաստիացնում են, որ այստեղ ևս կազմակերպուած է „պահպանութեան բաժանմունքը“ մայրաքաղաքի սիստէմով։ Մեր քաղաքի մէջ հաշւում են մօտ վեց հարիւր լրտես՝ ամեն ազգից։ Ամենից աւելի գարշելին մեզ համար այն է, որ մարդասէր-հրէշների շարքերը մտել են նաև հայ-դատարկապորտներ։

Այսպէս ուրեմն, ազգաբնակութիւնը ներսից ու դրսից ահաբեկուած, մահապարտի հոգեկան տանջանքներին ու գալարումներին է ենթարկուած։ Անորոշութեան մէջ սպասել թէ ե՞րբ պիտի հասնի վերջի րոպէն... դա տանջանքների ամենասոսկալին է։ Ու այս պայմանների մէջ, լկտիաբար յայտարարում՝ են իլուր աշխարհի՝ թէ Դումայի փակումը ժողովուրդը ընդունեց սառնասրտութեամբ... Ինքնամփոփ ու ամրակուռ յեղափոխութիւնը կը համբերի անշուշտ բայց չի մոռանայ այդ ամենը...։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՐԻԲԱԼԴԻ

(Ծննդեան 100-ամեակի առիթով)

I

Իտալիան իր ազգային հերոսին, Գարիբալդիի ծննդեան հարիւրամեակը տօնեց արևստ խանդավառութիւնով մը։ Այդ հանդէսը ազգային տօնի բնաւորութիւնը ունէր, և իրօք յուլիս 4-ը, օրէնքով „ազգային տօն“ հռչակուեց, որովհետև Իտալիան այդ օրը սիրտ մը ծնած էր։

Յաւիտենական քաղաքէն սկսած մինչև յետին գիւղակը ուր կիթառ մը կը թրթռայ, մինչև այն պայծառ արևներուն տակ ուր dolce far niente-ն կը ծուլանայ, ատուածացումը բրին Իտալիոյ անկախութեան և միութեան մեծ գործաւորին, ուխտագնացութիւններ կատարեցին անոր արձաններուն, որոնցմով շքեղազարդուած է Իտալիան։ Հռոմի մէջ քաղաքային և զինուորական անվերջ թափօր մը՝ առջևէն անցաւ Գարիբալդիի հսկայ ձիարձանին, որ բլուրի մը վրայէն կը հսկէ յաւիտենական քաղաքին վրայ, և անոր պատանդանին շուրջը պսակներէ անտառ մը ստեղծեցին։ Վեհապետը և նախարարները մասնակցեցան այդ մեծ տօնին։ *Eviva Garibaldi* աղաղակները—օ՛հ, Գարիբալդին միշտ կենդանի է—թնդացուցին ազատ և տարփոտ Իտալիան։ Երեկոյին լուսավառութիւն ամէն տեղ. ծերակոյտը, ի պատիւ ազգային գիւցազնին, դադրեցուց նիստերը։

Գարիբալդիի համար համակրանքի ջերմ ցոյցեր և պատիւներ եղան նաև Ֆրանսա, Անգլիա և այլուր։ Գարիբալդի իր լայն, մաքուր, զգայուն և մարդասէր ազատասիրութիւնով բոլոր ժողովուրդներու հիացումին արժանացած էր, ամբողջ մարդկութեան կը պատկանի ան

Ճակատագիր մը չէ՞ արդեօք—ճակատագիր մը որ արշալոյսներու կոթը ծծածէ—այդ տարօրինակ և խռովիչ էակը որ կը քալէր, ինչպէս կրսէ հեղինակ մը, երազի մը մէջ որը իրականացուց դաշոյնի հարուածներով, անտարբեր և արհամարհոտ հարուստներու և ամեն փառքի ու պատուի, հեռատպդելով երկու աշխարհներուն մէջ այն առաքելութիւնը, որը իր խիղճը իրեն կը պարտադրէր, հաւատարիմ մինչև վերջը մեծութեան և աղքատութեան իր իդեալին։

19 դարուն մէջ պառակտի և բաժան-բաժան Իտալիան երեք մարդ ունեցաւ, որոնք անոր ազատութիւնը և միութիւնը հրաշակերտեցին. —Վիկտոր Էմմանուէլ՝ Հայրենասէր Վեհապետը և յենակէտը միութեան, Կավուր՝ խորհող գլուխը և զուգորդութիւններու ճարպիկ դիւանդէտը, և Գարիբալդի՝ զինուորը, ժէստը, անսպառ եռանդը, որ սուր մը դրաւ ազատութեան ափին մէջ։

Գրել Գարիբալդիի կենսագրութիւնը գրել բսել է ժամանակակից Իտալիայի ազատութեան պատմութիւնը, երկուքը ուս-ուսի կը քալեն։

Հին դիցաբանութիւնը եթէ ուզէր ներկայացնել այդ մեծ կոնդոտիէրը, ազատութեան սիրահարը, լախտ մը պիտի տար անոր ձեռքը, որով բռնաւորներուն և հրէշներուն վրայ կը խոյանար։ Այդ կենսագրութիւնը ծայրէծայր գիւցազներգութիւն մըն է արկածալից, խրախ, հոյակապ և դէպի ազատութիւն անվեհեր ալացք մը. ան 19-րդ դարը կը կարէ կանցնի իր հանճարի թափովը, կը զարմացնէ արարաշխարհ իր հնաշխարհիկ մեծութիւնովը և հիացումի հեշտասարսուռ մը կանցնէ Եւրոպայի աղիքներէն և մինչև մահը կը պահէ իր հրայրքի անպառ ուժգնութիւնը, որ սպաս կը դնէ հարստահարուածներու հայրենիքներուն և վտանգի մէջ եղող ազատութիւններուն։

Ճիուղէպէ Գարիբալդի ծնած է 1807 յուլիս 4-ին, Նիս, ծովեզերեայ փոքրիկ տան մը մէջ, ուր իր աչքերը բացած են ծովի կապոյտ անհունութեան վրայ։ Նաւորդներու սերունդ, 16 տարեկան հասակէն նաւազ եղաւ։ Ծովը կը հմայէր զինքը, վտանգներու և փոթորիկներու ատեն կը վառուէր անոր յանդգնութիւնը, ինչպէս սրրկահաւը. ծովային շատ ճամբորդութիւններ բրաւ, երբ չափահաս եղաւ ծովու գայլ մ՝էր արդէն։ Նաւին վրայ դէպի արևելք ճամբորդած միջոցին էր որ հանդիպեցաւ Սէն-Սիմոնեաններու, որոնք երիտասարդ նաւաղին մարդասիրութեան, համերաշխութեան և ազատութեան առաջին ծանօթութիւնները տուին։ Առաջին անգամ երբ Հռոմը տեսաւ, որուն պատմութիւնը գիտէր միայն, իր մէջ արթնցաւ հայրենասիրութիւնը, որ երբէք չմտեց։

Այդ ատեն Իտալիան պառակտուած էր մանրմունր և ամենաբռնաւոր իշխանութիւններու, որոնք աւստրիական բռնակալութեան զուելի կուսակալները համարուած էին. պապականութիւնը միջնադարեան տգիտութեան և խաւարի մէջ կը պահէր Իտալիան, իսկ Աւստրիան իր քաղաքական ամենասարսափելի լուծը դրած էր Իտալիոյ վզին, և Մեթերնիխի բերնով կը յայտարարէր որ Իտալիա չը կայ, թէ, „Իտալիան լոկ աշխարհագրական անուն մըն է“։

Նապոլէոնի արշաւանքները ցնցած էին Իտալիան. այդ օրէն արդէն ազգային զգացումը և Իտալիոյ վերածնութեան գաղափարը սկսած էր գիտակցիլ և արգասաւորիլ զարգացած մտքերու մէջ։ Ամբողջ 19-րդ դարու իտալական գրականութիւնը գրուած է այդ ոգով և կարելի է ըսել թէ

Շարունակութիւն տես հետեւեալ թերթը

այդ գրականութիւնը՝ Իտալիոյ պատմութիւնը կ'ընէր և անոր risorgimento-ն—յարութիւնը—կը պատրաստէր, Դանտէն էր որ կը շարունակէր 19-րդ դարու գրականութեան լեզուն Իտալական միութեան իդէալը արտիւել կուտար հայրենասէր սրտերը։ Կարդուէցէր, ազատութեան և հակակղերական հոգի բանաստեղծը կերգէր, գինի և երկաթ կուզեմ, երկաթը բռնակալները կործանելու, գինին՝ անոնց յաղթական արարումը տօնելու համար"։

Մաքերու այդ խառվքի մէջէն դուրս եկաւ Իտալիոյ միութեան թէորիսիէնը ինչպէս նաև միջազգային եղբայրութեան և համագործակցութեան առաքեալը, Մաձձինին, որ հիմնեց Giovane Italia—Երիտասարդ Իտալիա—ընկերութիւնը։ Մաձձինի կազմակերպած յեղափոխութեան հիմը կը դնէ, հանրապետական սկզբունքով, և դաւադրութիւնը մէկն է ան գլխաւոր միջոցներէն որով Իտալիոյ պատմութիւնը պիտի դարձնեն։ Գարիբալդի այդ դաւադրական ընկերութեան կրակոտ անդամն էր։

Այդ կուսակցութեան դաւադրութիւնը երևան ելլելով խստիւ հալածանք սկսաւ անոր անդամներու դէմ, մահ էր պատիժը։ Գարիբալդի որ Սարդէնիոյ նաւատորմին մէջ մրտած էր կեղծ անունով, նաւատիները ապստամբեցնելու համար, երբ իմացաւ իրենց դէմ խիստ հալածանքը, ծրագրուած փախաւ Մարսիլիա, ուր ծառայեց նաւի մը մէջ։ Մարսիլիոյ մէջ իմացաւ իր մահապարտութիւնը. „ահա այսպէս սկսաւ իմ հանրային կեանքս", քսաւ։ Յետոյ անցաւ Թունուզ, ուրկէ մեկնեցաւ Հարաւային Ամերիկա։ Պրազիլիոյ ափերը նաւապետութիւնով կը զբաղէր, երբ ծագեցաւ այդ երկրի ներքին յեղափոխութիւնը։ Գարիբալդի, իր Լն երիտասարդ ու կրակոտ տարիքին մէջ, լեգէոնի մը գլուխ անցած, նեռեցաւ հանրապետականներու շարքին մէջ կայսրութեան դէմ։ Գրկաբաց ընդունեցին արի իտալացին։ Հանրապետութիւն անունը բաւ էր գինքը գինովցնելու համար։ Ամերիկայի մէջ էր որ Գարիբալդին հերոսութեան մէջ մարզեցաւ և կատարելագործուեցաւ։

Այդ յեղափոխութեան միջոցին աննման քաջագործութիւններ կատարեց։ Յեղափոխական նաւատորմիղի մը գլուխ անցած իբր ծովահէն—որովհետև ծովի և ցամաքի հերոս էր միանգամայն—կռուեցաւ կայսերական նաւերուն դէմ։ Ոչ մէկ վտանգ չէր յուսահատեցներ զինքը, հին դիցաբանական տիտանին պէս, քանի վտանգի հանդիպէր—և միշտ կը փնտռէր վտանգը, տարօրինակը և զարհուրելին—այնքան ուժ կուներ և կը զգար որ կապրէր։ Մարմինը վերքերով ծակծկած, քանիցս գերի բռնուած և փախած էր։ Մէկ անգամ բռնեցին և երկու ժամ դաստակներէն գերանէ մը կախեցին. ոչ մէկ ճիկ, ոչ մէկ տրտունջ, ոչ մէկ օֆ, „դև է" կրսէին դահիճները։ Իր ոսկորներու ցաւերը աքլեցնելու համար անպատրաստի երգեր կ'երգէր։

„Աւելի կը ցանկայի տեսնել իմ հայրենիքս անմարդաբնակ, անոր պալատները կործանուած, աւելի կը փափաքէի Ալպեաններու գագաթէն ժպտելով դիտել անոր քաղաքներուն հրդեհումը, քան թէ տեսնել անոր դողալը վանդալներու գաւազանին տակ"։

Այդ մարդու կեանքին մէջ հրաշք մը կար. քանի քանի անխուսափելի մահուան ճիրաններէն կրցած է պրծիլ և իր ճակատագիրը շարունակել։

Երբ թշնամուն ձեռքէն փախաւ, վազեց ծովահէնի նաւը և իր դահիճներու սուրի նստեցուց իր չարչարանքները։ Յետոյ Պրազիլեան ձգեց՝ անցաւ Ուրուկուէի փոքր հանրապետութեան կողմը՝ Պուէնոս Այրէսի դէմ։

Անոր շահատակութիւններուն համբաւը Եւրոպա հասած էր արդէն. Իտալիոյ մէջ անոր անունը բերնէ բերան կը թռչէր. Իտալիան Գարիբալդի մը կերազէր իր ազատագրութեան համար.

Գարիբալդիի անցուցած կեանքը պատերազմի և սիրոյ արկածներով լեցուն կեանք մըն է, դիւցազնավէպ մը ամբողջ, ուր մարդկային յանդգնութիւնը, վտանգի արհամարհանքը, ստոյիկեան և վայրագ չարքաշութիւնը, սրտի մեծութիւնը սպշանք կազդեն։

Այդ դիւցազնական կեանքին մէջ Գարիբալդի հովերգական գլուխ մը ունի։ Գեղանի և կրակոտ պրազիլուհի մը, Անիդա, թափառիկ ասպետին սիրոյը գրաւած էր հնդիկ երգեր երգելով, և ամուսնացած էին։ Հարանիքին օրը Գարիբալդին, իբր ընծայ իր ամուսնին, թշնամու մը նաւը օգը հանած էր։ Անիդա քաղցր էր և քաջասիրտ, կորովի և ճարպիկ. ան վայրենի դաշտերու մէջէն, գնդակներու սուլոցներու երգերով՝ հեռևեցաւ, ձիաբնակ և հեռաձակ, իր առիւծին, կուեցաւ անոր քովքովի, մինչև մահը։ Այդ հերոսուհին մաղ մը չը կորսնցուց իր կանացիութենէն, մնաց պարզ, շուշանի պէս մաքուր և սիրաղեղ։

Քանի-քանի անգամ Անիդա թշնամուն ձեռքը գերի ինկաւ։ Կը յաջողէր փախչիլ և վազել շիտակ խուի դաշտերը դիակներու մէջ փնտռտելու թէ արդեօք մեռած էր իր կարիճը և թէ ինքը այրի՞ մնացած էր։ Ցաշաթաթ երեսան գրկին մէջ կը պահէր կռիւներու միջոցին. թշնամուն զընդակները օրօրը կը սուլէին նորածինին։

Սրտոտ ամազոնը գինով և երջանիկ էր իր քաջին ծովահէնի նաւին վրայ, „իբր սիրահար՝ ամուսին, իբր տէր՝ ունիմ մարդ մը որուն հոգին այնքան լայն է ինչպէս այս անսահման ծովը, այնքան քաղցրաւէտ ինչպէս երկինքը, ասաւած մըն է վերջապէս..."։ Այսպէս կը նկարագրէր լակունացի ամազոնը իր հերոսը որուն կեանքին և արկածներուն անդրման և անձնուէր ընկերուհին եղաւ և իր սէրը վայրկեան մը չը թուլցաւ։

1848-ի Ֆրանսական յեղափոխութիւնը ռումբի պէս պայթած էր Եւրոպայի վրայ և դղրդած էր ժողովուրդները և բռնակալներու գահերը։ Իտալիոյ մէջ ազատական շարժումը հեղհեղուկ կը մակնիանար, Պիոս Թ.-ի պապութեան գահը բարձրանալը յոյսեր կը ներշնչէր. փոքրիկ իշխանները, ցարդ ոչնչեալ ազգային շարժման, ուելի ու աւելի կղզային ստար լուծին ծանրութիւնը և ամօթը։ Երբ Աւստրիան այդ պահուն ձեռքը կրակն էր ներքին և մաճառական յեղափոխութեան դարձով, կամքեր կը գրէր Թիւրէնի թերթի մը մէջ, „յանդուգն որոշումի ժամն է... պատերազմ, խիզգն պատերազմ"։ Իտալիան ոտք ելաւ աւստրիացիները քշելու համար իտալական հողէն։

Հարաւային Ամերիկայի իտալացի գաղթականները, որոնք իրենց կեանքը նուիրած էին օտար ազատութիւններու համար, չէին կրնար հանդուրժել, որ իրենց սիրելի Իտալիոյի ազատութեան կռիւներուն անբաժին մնան իրենք և չկրնան ըսել ապագային, „մենք ալ հոն էինք". ուստի հանգանակութիւնով նաւ մը վարձեցին, և սա խորհրդանշական անունը տուին անոր, Speranza—Յոյս։

1848 ապրիլ 15-ին, Գարիբալդի իր 63 զինուորներով „Սպէրանցան" նստած, թռաւ Իտալիա՝ գերի հայրենիքի ազատութեան նուիրելու համար իր սուրը։

ԴԱՐՁԵԱԼ ՅՈՒՍԱԽԱԲ

Խե՜ղճ Մակեդոնիա, խեղճ ժողովուրդներ... Մի անգամ ևս խօսեց դիպլոմատիան քո ճակատագրի մասին իր հեղինակաւոր ներկայացուցչի բերանով և մի անգամ ևս հաստատեց պերճախօս կերպով, որ քո ազատութիւնը քո բաղուկներով միայն պիտի նուաճես։

Անգլիայի արտաքին գործերի մինիստրն է այս անգամ խօսողը։ Ի՞նչ է պատասխանում նա անգլիացիներից կազմուած Բալկանեան կոմիտէի դիմումին...—Հին, ոճրագործ և զազրելի յայտարարութիւններ...

„Դրութիւնը Մակեդոնիայում թէև շատ ծանր է, „բայց Անգլիան մինակ ոչինչ չի կարող անել, անհրա„ժեշտ է միւս պետութիւնների գործակցութիւնը և այլն „և այլն։

Եւ ապա սովորական, հազար անգամ կրկնուած ըսպառնալիքը՝ Մակեդոնիայում կուռող խմբերի հասցէին...

Ասաց և լռեց... մինչև որ նորից մի եպիսկոպոս կամ

խաղաղարար ընկերութեան մի ուղերձ նորից կը խօսեցնէ զգուշաւոր քաղաքականութեան զգեղի քուրմին։ Իսկ Մակեդոնիան կ'արիւնոտի...

Վերջին ապստամբութեան օրերից ի վեր աշխարհը յոյս էր տածում, թէ Մեծ-Բրիտանիան, որ միւս պետութիւններից աւելի արմատական ծրագիր էր պաշտպանում այդ դժբախտ երկրի բարեկարգման համար, յամառ կերպով կը շարունակէ իր առանձնակի ու ըմբոստ ընթացքը և կը հասցնէ մինչև վերջ։

Մակեդոնական-բուլգարական շրջաններում սրտատրոփ սպասում էին Սըր Գրէյի վերջին յայտարարութեան... Դարձեա՞լ անողորմ հիասթափութիւն, դարձեալ յուսախաբ...

ԹԻՒՐՔ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՆԵՐԻ ԹՌՈՒՑԻԿՆԵՐԸ

Ստացել ենք Վանի թիւրք յեղափոխականների հրատարակած երկու թռուցիկները, որ տպագրում ենք անփոփոխ կրճատումներով։

I

Հայրենակիցներ.

Ո՞վ հայրենեաց զաւակներ, հայրենիքը մեր գորովալից մայրն է. նրա յարգը պէտք է ճանաչենք ու մինչև վերջին շունչը նրան ծառայենք։ Ազատենք մեր հայրենիքը։ Սուլթանի կողմից նշանակուած գող պաշտօնեաները մեր երկիրն աւերելուց ու իրենց գրպանները լեցնելուց զատ՝ ոչ մի այլ մտածմունք չունին։ Մինչև հիմա մեր տեսած պաշտօնեաները բոլորն էլ իրենց անձնական շահերի համար փող են դիզում ու սուլթանին սուտ ու կեղծիքներ գրելով՝ աստիճաններ, շքանշաններ կորզելուց զատ՝ ուրիշ գործ չունին։

Քանի որ այդ այդպէս է, մենք ամենքս էլ միանանք և այս զալըմ ու վնասակար պաշտօնեաների ձեռքից ազատենք։ Թիւրքիայի այս անլեզու խեղճ ժողովուրդները, որոնք իրենց օրական պարէնը չեն կարող ճարել, և շատերը սովածութեան հանելով ինքնասպանութիւն գործելու չափ հարստահարւում են, ազատել կարող են միայն այն ժամանակ, երբ գոնէ այս անկուշտ պաշտօնեաների զուլումից դրդուած, թմրութեան քնից արթնանան։

Այսօր մեզնից զատ բոլոր քաղաքակիրթ ազգերը այսպէս են ազատ կեանք ձեռք բերել ու երջանկացել։ Թողնե՞նք, ուրեմն, չլոկ պարծանքները ու միանալով՝ մեր ապագան մտածենք, մի միջոց ձեռք առնենք Արդարութիւն և Իրաւունք գտնելու, ընկերներ...

Հայրենասէրներ.

II

Մեր բոլոր հայրենակիցներին.

Բողոքելով Թահիր փաշայի դէմ, մեր յոյսերը դնել ենք արդարութեան յաղթանակի վրայ։

Ափսո՜ս մեզ. մեր սրտերը վշտերով միայն հարստացած են և աղքատների—թշուառութիւնը խոկացող այդ անճարների—դարդերը կարգ կարգ իրար վրայ բարդուած են։ Այն վէրքերը (հարկեր), որ անցեալում թաղապետների և հարկահաւաքների կոկորդն էին անցած, աղքատ դասակարգերի այդ վէրքերը կրկին պահանջում ու առնում են։ Մենք այս բորենի, անիրաւ ու սոված պաշտօնեաներին չենք կարող կշտացնել։ Մինչդեռ բազմաթիւ որբերի, այրիների, խեղճ պատանիների ճնշող աղաղակները մինչև երկինքն են հասնում, ու մենք սովածութեան վտանգից պրծնելու համար մի ճար ենք որոնում, աւա՜ղ, դրա փոխարէն տեսնում ենք արհեստաւորների ձեռքի գործիքը, երկրագործների կենդանիները, սերմացուն ու վերջին ծայր աղքատների անկողինները հարկահաւաքների, ոստիկանութեան ու ժանդարմների ձեռքին։

Մեր աղաղակը ո՞ւմ լսեցնել պիտի տանք։

Մեր աղաղակի կոչերին ո՞վքեր պիտի հասնին...

Ժողովուրդը...

Հայրենասէրներ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՍԱԼՄԱՆ

(ՀԱՄԱՉԱՍՊ ԲԱՂԼԻՇՑԻԱՆ)

1883—1907

Դաշնակցութիւնը իր զգայուն և գաղափարական երիտասարդ ընկերներէն մէկն է որ կը կորսնցնէ այնքան վաղահաս մահով մը։

Սալման, ընիկ վանեցի, ծնած էր 1883-ին, ծանօթ ընտանիքէ։ Իր ուսումը աւարտած էր Էջմիածնի ճեմարանին մէջ և ծանօթ եւրոպական չորս լեզուներու՝ որոնց շնորհիւ մեծապէս օգտուէր օտար գրականութիւններէն։ Դեռ ճեմարանում թոքախտը արդէն բոյն դրած էր անոր մարմնին մէջ։ Վան վերադարձին բաւական կազդուրուած՝ նուիրուեցաւ կրթութեան գործին, միւս կողմէ ինքն ալ կը զարգանար, այդ խաւարապաշտ երկրին մէջ, հետևելով եւրոպական մտքին և միանգամայն անդուլ կը գործէր յեղափոխական դրօշին տակ, ցերեկները նուիրուելով ուսուցչութեան, իսկ գիշերները յեղափոխութեան, որ դէպի արշալոյսը կը դիմէր...։

Վասպուրականի Կեդր. կոմիտէի անդամ էր, երբ 1907-ի Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին պատգամաւոր մեկնեցաւ։ Սակայն Պարսկաստանի մէջ ջերմէ բռնուելով հիւանդութիւնը սուր կերպարանք առաւ։ Բժիշկները խորհուրդ տուին հանգիստ մնալ, Սալման չը համբերեց և ճամբայ ինկաւ, իբր ժողովուրդի զաւակ, իր փարձառութեան բաժինը բերելու Ընդհանուր Ժողովին։ Երբ Վիեննա հասաւ հիւանդութիւնը շատ հիւծած և ուժասպառ ըրած էր զինքը։ Ընկերները ուղարկեցին զայն աւստրիական Տիրոլ բժշկելու, ուրկէ իր փափաքով, փոխադրուեցաւ Ժընեվ։ „Հայ ընկերներու մօտ կուզեմ մեռնիլ“. կըսէր տխուր նախազգացումով մը։ Թոքերը անգթօրէն կը հատնէին, մթնոլորդը կարծես քիչ կուգար զանոնք լեցնելու համար։ Հիւանդութեան մահճին մէջ, կարօտը կը քաշէր հայրենի սարերուն և ընկերներուն, որոնք, խրոխտ և անվեհեր, գաղափարի առապար ուղիներու վրայ ազատութիւնը կը խաչակրէին։ Իր վերջին օրերուն խնդրեց Նիչէի և Իբսէնի գործերէն. տիեզերային կամքի ո՞ւժը կուզէր ծծել անոնցմէ, երբ կզգար թէ գիտութիւնը անզօր էր իր չար հիւանդութիւնը մահացնել, թէ գաղափարի և հոգիի թափը կորոնէր նիւթին վրայ յաղթանակ տանելու համար... Ապրիլ կուզէր դեռ դժբախտ երիտասարդը և գործել.

Կեանք տուէք հոգուս,
Կայծ տուէք սրտիս...

Այդ բառերը կային անոր տրտմային և անձկալից աչքերուն մէջ երբ կզգար թէ դաժան ախտը անգդի մը պէս կը կրծէր իր կուրծքը։

Յունիսի 26-ին Համազասպ մեռաւ 24 տարեկան ծաղիկ և սրտոտ տարիքին մէջ, երբ կազմակերպութիւնը դեռ պէտք ունէր անոր յափշտակութեան, ազնիւ ու անդաւաճան զգացումներուն։

„Դրօշակի" խմբագրութիւնը անոր թաղումը Ժրնեվի մէջ կատարելու տխուր պարտականութիւնն ունեցաւ։ Մերձաւորներու ցանկութիւնով, մարմինը այրեցաւ։ Սալմանի ածիւնը պահ կը մնայ „Դրօշակի" խմբագրատան թանգարանին մէջ, մէկ օր, երբ Արդարութեան արևը ճառագայթէ Հայրենի հողին վրայ, հայ քաջերու մասունքներուն քովիկը ամփոփելու համար։

ԿՈՒԱԱԿՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի յաջող վախճանը եւ ընդունուած որոշումները,—ուրախ եմք արձանագրելու—յարուցին մեր բոլոր մարմիններուն եւ ընկերներուն շարքերում բուռն զոհունակութիւն։ Անպատեհ համարելով „Դրօշակի" էջերի մէջ առաջ բերել այդ զոհունակութեան փաստերը եւ արտայայտութիւնները, որոնք բազմաթիւ են, բաւականանում եմք արձանագրելով այնպիսիները, որոնք արտայայտում են ղժգոհ խմբերի տրամադրութիւնը եւ նոյնիսկ դարձը։

ՄՈՍԿՈՒԱ, 23 մայիս

Մոսկուայի դաշնակցական բաժանողական ուսանողները, լսելով Դաշնակցութեան չորրորդ Ընդհանուր Ժողովից վերադարձած իրենց պատգամաւորի զեկուցումը, կայացրել են հետեւեալ որոշումը։

Աչքի առաջ ունենալով,

Որ՝ համաձայն այդ զեկուցումին, Թիւրքիայի տնտեսական եւ սոցիալական պայմանները եւ արդի յեղափոխական կռիւը շատ աւելի տարբեր պատկեր են ներկայացնում, քան մենք կարող էինք ենթադրել մեր դեկտեմբերեան բեզոլիւցիան դուրս բերելիս։

Որ այդ պայմանները անհրաժեշտ են դարձնում Թիւրքահայ աշխատաւորութեան՝ իր սեփական միջազգային դրօշակը պարզելու ընդդէմ ֆէօդալականութեան եւ այնտեղ գործող դրսի և ներսի կապիտալի և տարրալուծելու ընդհանուր դիմադրական բանակը, անջատելով աշխատաւորների կռիւը ֆէօդալական բուրժուական օպպոզիցիայից, վերջինիս հնարաւորութիւն չը տալու համար՝ Թիւրքիայի յեղափոխական կռիւի հետեւանքները միմիայն իր օգտին ծառայեցնելու։

Որ Թիւրքիայում գործող մեր ընկերները վերջին տարիների ընթացքում արդէն յաջողեցրել են այնտեղի յեղափոխական գործին տալ մասսայական բնաւորութիւն և մի շարք վճռական քայլեր են արել՝ յեղափոխական կռիւը դնելու միջազգային համապետական ճանապարհի վրայ։

Որ այսուհետև Հ. Յ. Դաշնակցութիւնը, համաձայն չորրորդ Ընդհանուր Ժողովի չափազանց նշանակալից որոշումներին՝ տալ համապետական, միջազգային բնոյթ, միացնելով մի կուռ բանակի մէջ այնտեղ տառապող բոլոր ազգերի աշխատաւորական տարրերը։

Որ Դաշնակցութեան գործունէութիւնը այդ ուղղութեամբ բնաւ չի կարող անդրադառնալ ազգայնօրէն կովկասահայ աշխատաւոր մասսայի գիտակցութեան վրայ։

Որ այսպիսի գործունէութիւնը այլ ևս չի կարող որևէ հմայք ու արժէք ունենալ հայ բուրժուազիայի համար, չի կարող ծառայել նրան, որպէս շահագործման միջոց, չի կարող „արժանանալ" նրա օժանդակութեան, և վերջապէս չի կարող լինել այն խողովակը, որով ներս էին խուժում մինչև այժմ կուսակցութեան մէջ բուրժուական տարրերը։—

Միւս կողմից աչքի առաջ ունենալով՝

Որ կովկասահայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը, որ երկրորդն էր այն օբեկտիվ պայմաններից, որոնք անհրաժեշտօրէն Դաշնակցութեան կովկասեան գործունէութեանը՝ հակառակ դաշնակցական սոցիալիստ խաւերի գործ դրած բոլոր ջանքերին՝ տալիս էին համազգային ապադասակարգային գոյն,—այժմ կուսակցութիւնը յանձնում է իրեն ժողովրդին։

Որ Ընդհանուր Ժողովի ընդունած սոցիալ-յեղափոխական ծրագիրը մի կողմից, միւս կողմից էլ Դաշնակցութեան մէջ իշխող աշխատաւորական տարրերի գիտակցութեան բնական զարգացումը և դասակարգային կռուի լայն ծաւալումը յեղափոխական Ռուսաստանում և մանաւորապէս Կովկասում այն կարևոր օբեկտիվ նախապայմաններն են, որոնք երկրորդ անհրաժեշտութեամբ վերջնականապէս դուրս պիտի քշեն և այն՝ արդէն չափազանց նեղ ոչ-աշխատաւորական և հակա-սոցիալիստական տարրերը, որոնք դեռևս մնայել են կուսակցութեան մէջ։

Որ Հայ Յ. Դաշնակցութեան չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումները և de jure, և de facto կուսակցութեան դեկը և բախտը յանձնում են սոցիալ-յեղափոխական շինչայի ներկայացուցիչների ձեռքը։

Որ վերոյիշեալ պայմաններում Դաշնակցութիւնից անկախ մի նոր սոցիալ-յեղափոխական հայ կազմակերպութեան գոյութիւնը աւելորդ առիթներ պիտի ստեղծէր հայ աշխատաւորութեան գիտակցութիւնը շփոթելու համար, չը կարողանալով տալ նրան Դաշնակցութեան կովկասեան գործունէութիւնից էապէս տարբեր ծրագիր և տակտիք, որովհետև կովկասահայ աշխատաւորի համար Դաշնակցութեան թիւրքական բաժինների կապը, ունենալով գերազանցապէս բարոյական և գաղափարական բնոյթ՝ շնորհիւ չորրորդ Ընդհանուր Ժողովի ստեղծած պայմաններին՝ չի կարող վնասել ոչ թիւրքահայ և ոչ էլ կովկասահայ աշխատաւոր մասսայի շահերին, քանի որ երկու հատուածներն էլ այժմ կատարելապէս ինքնուրոյն են իրենց գործունէութեան մէջ։

Որ կուսակցական այդպիսի կապը այդ երկու հատուածների մէջ, ստեղծելով մեզ համար լայն հնարաւորութիւն տարածելու մեր աշխատաւորական իդէօլոգիան Թիւրքիայում, անհրաժեշտ է, քանի դեռ Թիւրքիայի ինտելիգենցիան թոյլ է ազդելու այնտեղի յեղափոխական շարժումների վրայ մեր ցանկացած ուղղութեամբ։

Որ սոցիալիստական բանակի պառակտումները, թուլացնելով աշխատաւորութեան մարտական ոյժը, կարող են նպաստաւոր ու ցանկալի լինել միմիայն բուրժուազիայի համար։

Որ համայն Ռուսաստանի սոցիալիստական հոսանքները նկատելի կերպով ձգտում են կազմակերպչական միութեան և ոչ անջատման,—

Մենք, Մոսկուայի բաժանողական դաշնակցական ուսանողներս գտնում ենք, որ վերոյիշեալ բոլոր պայմանները անհրաժեշտ և բաւարար հիմք են ներկայացնում սոցիալ-յեղափոխական հայ ինտելիգենցիայի համար՝ արդէն վերացած համարել մի նոր սոցիալ-յեղափոխական հայ կազմակերպութիւն ստեղծելու պահանջի raison d'être-ը և կոչ անել մեր բոլոր բաժանողական և անջատական ընկերներին, որոնք կանգնած են սոցիալ-յեղափոխական տեսակետի վրայ՝ միանալ մեր որոշման և նորից համախմբել կուսակցութեան շուրջը յանուն աշխատաւորութեան նուիրական շահերի։

Մոսկուայի Դաշնակցական հայ ուսանողներ

(Ստորագրութիւն)

—

„Մենք, Դաշնակցական գործակատարների արհեստակցական Միութեան բայօնական 45 ներկայացուցիչներս, լսելով զեկուցումն Հ. Յ. Դաշնակցութեան չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումների և վերամշակած ու հաստատած աշխատաւորական-սոցիալիստական ծրագրի վերաբերմամբ, ինչպէս նաև այն մասին, որ Դաշնակցութիւնը, իբրև մի անբաժան կուսակցութիւն, այսուհետև էլ շարունակելու է իր յեղափոխական գործունէութիւնը թէ Թիւրքաց-Հայաստանում և թէ այստեղ—Կովկասում, յայտնում ենք մեր հրճուանքը և ջերմ զոհունակութիւնը այդ առթիւ։

Ընդհանուր Ժողովի միահամուռ համերաշխութիւնը և

նրա կայացրած ծրագրային ու տակտիկային վճիռները մի նոր առհաւատչեայ են, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը պիտի կարողանայ անյողդողդ կերպով առաջ տանել իր բեղմնաւոր գործունէութիւնը յանուն Հայ աշխատաւոր ժողովրդի անտեսական-քաղաքական ազատագրութեան և որ գիտակից աշխատաւորները այսուհետև նոր ոգևորութեամբ պէտք է համախմբուեն նրա դրօշակի տակ»։

(Usnrագրութիւն)

Թիֆլիս, մայիս 29

—

Հ. Յ. Դաշնակցութեան IV-րդ հարիւրեակը, որը կապուած էր մի քանի բախտախնդիրների կազմակերպած „Զինուորական խորհուրդ“ կոչուող մարմնի հետ, վերջին օրերս գումարելով մի շարք ժողովներ, և ի նկատի առնելով, որ կուսակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովը „ապօրինի“ էր յայտարարել այդ մարմինը, որն իրեն նպատակ էր դրել իր սրիկայ ղեկավարների շահադիտական նպատակների համար շահագործել տաճկահայ դատը, իր վերջին նիստում, կայացած յունիսի 16-ին, որոշեց միաձայն՝ խզել իր բոլոր կապերը այդ մարմնի հետ և մտնել կուսակցութեան դրօշակի տակ, ամբողջովին հպատակուելով Դաշնակցութեան չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումներին, կազմակերպուելով համաձայն այն սկզբունքների, որոնք որոշած են Ընդհանուր Ժողովի վերամշակած „Կանոնագրի“ և „Ծրագրի“ մէջ։

(Usnrագրութիւն)

—

Մենք, „Արշալոյս“ խմբի ընկերներս, թուով մօտ 120 հոգի, լսելով Դաշնակցութեան չորրորդ Ընդհանուր Ժողովի վճիռը, այսօրուանից ընդմիշտ հեռանալով „Ժամանակաւոր Զինուորական Խորհրդից“՝ ընդունում ենք Ընդհանուր Ժողովի որոշումները, միանգամայն հպատակուելով նրանց։

Սրանով կոչ ենք անում նաև մեր միւս համակրող ընկերներին՝ հետևել մեր օրինակին և շտապել համախմբուել Դաշնակցութեան դրօշակի տակ, որովհետև միմիայն անբաժան Դաշնակցութիւնն է, որ միշտ պաշտպան է հանդիսանում տառապող հայ աշխատաւորութեանը թէ Թիւրքայ-Հայաստանում և թէ Կովկասում։

„Արշալոյս“ խմբի ընկերների դիմաց՝

(Usnrագրութիւն)

16 յունիսի, Թիֆլիս։

—

Քաղաքական խմբերի Դաշնակցական ընկերները, լսելով Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովի վճիռը, որի համաձայն կուսակցութիւնը, անբաժան շարունակելու է աշխատաւորական-սոցիալիստական ուղղութիւնը թէ Թիւրքայ-Հայաստանում և թէ Կովկասում,— ողջունում ենք Ընդհանուր Ժողովի յաջող վերջաւորութիւնը և յայտնում ընկերների բերկրանքները նրա որոշումների առթիւ։

11 խմբերի ներկայացուցիչներ

—

Գանձակում կայացած դաշնակցական ընկերների ժողովը,—թուով մօտաւորապէս 300 հոգի,—լսելով զեկուցումն Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհանուր Ժողովի մասին, բուռն համակրութեամբ ընդունեց նրա որոշումները։ Ժողովը լիակատար բաւարարութիւն ստացած լինելով, հաւատում է, որ Դաշնակցութիւնը իր այդ որոշումներով աւելի ևս ընդգծելով աշխատաւորական-դասակարգային տեսակէտը, անյողդողդ կանգնած է հայ աշխատաւոր մասսաների շահերի պաշտպանութեան ուղիի վրայ։

Ժողովը ի սրտէ ուրախ է, որ Դաշնակցութեան ներկայացուցիչների համագումարը երկու երկիրների իրականութեան աչալուրջ քննութիւնից յետոյ, ամենաներդաշնակ և նպատակայարմար կերպով է միացրել Թիւրքայ-Հայաստանի և Կովկասի գործունէութիւնը, որը ապացուցանում է, թէ Դաշնակցութիւնը հայկական իրականութեան մէջ միակ աշխատաւորական-սոցիալիստական գործն կուսակցութիւնն է, որ ընդունակ է ինչպէս աշխատաւոր գիւղացիութիւնը նոյնպէս և բանւորութիւնը ղեկավարելու դէպի քաղաքական և անտեսական ազատութիւն։ Այդ յուսով նա իր կոչն է ուղղում աշխատաւոր գիտակից մասսաներին՝ համախմբուելու Դաշնակցութեան դրօշակի տակ և համերաշխ ջանքերով առաջ տանելու իրենց կռիւը՝ ընդդէմ բռնակալութեան և հարստահարութեան։

(Usnrագրութիւն)

3 յունիսի, Գանձակ.

—

Մենք „Արտաւազդ“ խմբի անդամներս, թուով մօտ 200 հոգի, հեռանում ենք „Ժամանակաւոր Զինուորական Խորհրդից“ և խոնարհւում Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի առաջ, որի նշանաբանն է թէ Թիւրքայ-Հայաստանի և թէ Կովկասի հայ աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութիւնը։

Խնդրում ենք նմանապէս մեր ընկերներին հետևել մեզ, որովհետև միաբանութիւնը բարիքների ծնողն է, իսկ անմիաբանութիւնը՝ չարիքների։

(Usnrագրութիւն)

—

Դաշնակցական „Պահանջ“ խումբը, որը կապուած էր մի քանի բախտախնդիրների կազմակերպած „Ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ“ անունով մարմնի հետ, անդադար սպասում էր Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովի անօրինութեանը։ Եւ այսօր, երբ յայտնի է Չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումները—„Պահանջ“ խումբը, որ մտնում է 9-րդ հարիւրակի մէջ, սրտի անհուն բերկրանքով միանում է Հ. Յ. Դաշնակցութեան, մտնելով նրա դրօշակի տակ և գործելով համաձայն Ժողովի որոշումների։

Ի դիմաց „Պահանջ“ խմբի 130 ընկերների՝

(Usnrագրութիւն)

—

„Զինուորական խորհրդի“ հետ կապ ունեցող 5-րդ հարիւրակը, որը կազմել էր „Զինուորական խորհրդի“ օրով, վեց ամսեայ գործունէութեան ընթացքում տեսաւ, որ իսկապէս „Զինուորական խորհուրդ“ կոչուող մարմինը միանգամայն կեղծ և բախտախնդիր է եղել, շահագործել է տաճկահայ դատը, օգտուելով խառնակ պարագաներից։ Մենք, 60 հոգի ընկերներս միաձայն անէծք ենք կարդում մոլորեցնող և շահագործող ղեկավարներին և նորից խոնարհւում ենք Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի առաջ, ընդմիշտ հաւատարիմ մնալով Չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումներին և նրա շեշտած վեհ նպատակին։

(Usnrագրութիւն)

Թիֆլիս, 18 յունիս

—

Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովը այնպիսի խելացի ձևով լուծեց կուսակցական կեանքի մէջ վերջերս տարաձայնութիւնների աղբիւր ծառայող բոլոր կնճռոտ հարցերը, որ այլևս վիճել նրանց մասին աւելորդ է։

Ընկերնե՛ր, զանազան անձնասիրութիւններ մեզ շեղել էին այն ճանապարհից, որով մենք պիտի ընթանայինք Մայր-Կուսակցութեան ղեկավարութեան տակ։ Բայց այժմ մեզ համար ճշմարտութիւնը պարզուում է, և մենք թողնելով ապօրինի և տաճկահայ նեղիրական դատն այնքան անարդող, այնքան արատաւորող „Ժամ. Զինուորական խորհուրդ“ կոչուող մարմինը, դիմում ենք դէպի մեր Մայր-Կազմակերպութիւնը՝ կեղեքուող, յօշոտուող և թշնամիներից արնաքամ եղած աշխատաւոր հայ ժողովրդի ազատագրութեան սրբազան գործին՝ նրա ղեկավարութեան տակ ծառայելու համար։

Խմբուենք Դաշնակցութեան Դրօշակի տակ, որովհետև միայն այդպիսով կը կարողանանք մեր պարտքը կատարել մեր դատի վերաբերմամբ։ Դէպի Մայր-Կուսակցութիւնը, և հեռո՛ւ մեր անգիտութիւնն ու միամիտ հաւատը շահագործող „Ժամ. զինուորական խորհրդից“։

Ի դա՛րձ, մոլորուած ու խաբուած ընկերներ, դէպի յեղափոխական կուսակցութիւնը, որը միակ կը տայ մեզ այն, որին մենք ձգտում ենք։ Ի դարձ, ընկերներ, որովհետև Չորրորդ Ընդհանուր Ժողովի կամքը, կուսակցութեան բարձրագոյն ատեանի կամքը այդ է մեզ թելադրում և այդ է մեզ հարկաւոր։

(Usnrագրութիւն)

ԹԵՐԹՕՆ

ՄԵՆՔ ՊԻՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԵՆՔ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴԻՆ

Դարձեալ արիւնի ու դարձեալ հոգեվարքներու հեռանկարներ աւերակներու թշուառութեան վրայ,
Ծաղիկները լքումի դաշտերուն մէջ կը մեռնին ու թռչունները երամներով նորէն ետ կը դառնան,
Ծործորներուն մէջ հողմերը վաղորդայնի կսկիծները կ'եղերերգեն զարհուրած ժայռերու մենութեան առաջ,
Զարչարանքի երկինքէն տրտմութեան ամպերը պատանքներու հանգոյն հալածանքի սահմաններուն վրայ կը կախուին,
Ու անյուշ հորիզոնները արգահատանքի նայուածքները կը բանան յուսահատութեան քաղաքներուն ու գիւղերուն վրայ...

Դարձեալ ջախջախումը երիտասարդ ոսկորներուն ու քայլերուն վրայ յանկարծական դիակնացումը բիւրերուն,
Օրերով հրդեհումը խաղաղութեան երդիքներուն ու վայրագ կողոպուտը աշխատանքի յարկերուն.
Դարձեալ խունապը սարսափին ու դարձեալ մահու աղաղակները վիշապացուկ խաւարին,
Շաբաթներով գիշերական թաղումը մեռելոտիներուն ու անսահման սուգը տառապեալ հողին...

Եւ այդ նորէ՛ն դուն, թագակիր դահիճներու ամենէն իժականդ ու ամենէն վամպիրականդ,
Անհասարուռ մղձաւանջէդ հալածական՝ մահու հրամաններդ կ'ոռնաս շողիքդդ շրթունքներովդ,
Կեանքեր կուզես խլել մեզմէ գոհացնելու ապարանքդ իջևանած մահին պահանջը անյագուրդ,
Եւ այդպիսով արևիդ շրջանառութիւնը երկարացնել կերազես, որ միայն գերեզմաններու վրայ շողաց...

Արդէն խառնածին զաւակներդ այրած են մեր արմտիքը ու գրաւած մեր արտերը, որպէսզի մենք սովէն մեռնինք,
Կը ծախեն մեր անկողիններն այսօր, որպէսզի հողին վրայ գիշերելով՝ որդերու պէս ոչնչանանք,
Եւ զօրդդ ու ամբոխդ կը գինես դրկելու համար մեզ խսպառ քնաջնջելու,
Երբ մենք անօթի ու մերկ, հողերուն վրայ մեր հոգևարքով կը չարչրուինք...

Բայց մենք դարձեալ պիտի ապրինք առանց հացի ու առանց անկողնի, հողերուն վրայ, հողը լգելով,
Մեր հրդեհած տունները լքած՝ ժայռերուն պիտի փարինք ու անգղերու պէս դիակներով սնանինք,
Մեր ծերերն ու յուսահատները մորթելով՝ անոնց արիւնը պիտի խմենք ու նորէն պիտի ապրինք,
Եւ այսպէս մի՛շտ մեր ցեղը յարաճուն ու կենդանի պիտի պահենք սրբազան ընդհարումին համար...

Մենք պէ՛տք է որ ապրինք, զի մենք մաքառողներն ենք արդարութեան և նախամարտիկները փրկութեան բանակին.
Մեր արիւնող ձեռքերը կը կրեն լուսարփի ճահերը քաղաքակրթութեան ատրուշանին,
Մեր ռազմերգերը ակկորտներն են խաղաղութեան երգի տիեզերական ներդաշնակութեան,
Ու մեր արիւնն ու ուղեղը շաղախն է ժողովրդական համերաշխութեան փառապանծ տաճարներուն,
Մենք զինեալ բռունցքներն ենք անմահ գաղափարին ու շանթամռունչ լեզուները անոր,

Մենք ամպրոպներն ենք դարևոր վշտի ամպերուն ու փոթորիկները աքսորուած սիրոյ բարկութեան,
Մենք քայլերն ենք խաղաղարար ապառնիին ու աղամանդեզր Յորդանանը վաղուան մարդկութեան,
Մենք շուշաններն են բանականութեան ու վարդագոյն ցայտաղբիւրները իդէալի պարտէզներուն,
Ու մենք դատախազներն ենք մարդկային արժանապատուութեան ու նպատակը հողեղէն մարդուն...

Եւ դուն, որ բովանդակ սերունդի մը գերեզմանները կմախքացած ձեռքերովդ փորեցիր,
Դու լաւ գիտես, որ մենք մահէն չենք վախնար, այլ ինքը մեզմէ կը պատկառի։
Դու տեսար մեր բիւրաւոր հերոսներուն գինիով համբուրուիլը արհաւրալի հնձողին հետ,
Ու Բարկէնի, Գնունիի և Արտաշէսներու մահաքրքիջը աշտարակներուդ մէջ դեռ կ'արձագանքէ...

Յեղափոխական մահը եղաւ մեր Մեծ դաստիարակը, ու լուծեց մեզի կեանքի-նպատակի առեղծուածը խաւարապարուր.
Ու մեր երազաթափ օջախներուն տակ՝ մեզ աւանդեց հայրօրէն տիեզերական իմաստասիրութիւնը անսուտ.
Ան մեր ձեռքերէն բռնելով՝ մեզի ցուցուց կեանքի ու մահի սահմանները քով-քովի,
Եւ այն օրէն օրօրոցէն — գերեզմանի հեռաւորութիւնը չնչուեցաւ մեր նայուածքին առջև...

Մենք տեսանք անցած դարերը իրենց գերեզմաններով, իրարու վրայ թաղուած,
Եւ մահն անգամ չը կրցաւ յիշել գոնէ թուականները հողին հաւսրուած սերունդներուն,
Միայն մեզ ցուցուց սակաւաթիւ գերեզմաններ կարկառուն, որպէս ներկայացուցիչները անցած կեանքին,
Որոնց մոռացումը չէր կրցեր յաղթահարել, և որոնք ազատութեան և արդարութեան համար ինկածներն էին։

Ու մենք մահէն իմաստացած աչքերով նշմարեցինք կամուրջը, որ կը ծգուէր դէպի յաւիտենականութիւն,
Ու մարեցինք մեր մէջ երկարակեցութեան տենչահնոցը, որ անմահը մահկանացու կը դարձնէ,
Եւ մենք փնտռեցինք այն մահերը, որոնք անցաւորը անանցի կը վերածեն,
Ուստի ուխտեցինք ապրիլ կեանքին խորութիւնը, հոն գտնելով բովանդակ իմաստը մտածող գոյութեան...

Ընդհարումի մահը աւելի քաղցր է, որովհետև մենք կը մեռնինք Աստուծոյ մը հպարտութեամբ,
Եւ այդ մէկ վայրկեանն է ճշմարիտ, մնացած կեանքը պատրանք մ'է եղկելի,
Ստրկական արթնութիւնը գիշերն է տրտում՝ հերոսական մահի արևշող առաւօտուն,
Զի այդ մահով մենք կը ծագինք միայն՝ արևին հետ լուսաւորելու համար կեանքը...

Մենք մեր գերեզմաններուն մէջէն կը շարունակենք ապրիլ անանց, որպէս ժամանակը,
Եւ եթէ կայ կեանք մը ազատներու, արդարներու և վսեմներու համար պատրաստուած,
Եւ այդ անշո՛ւշտ կայ, այս աղտո՛տ, պժգալի ու անարժան սողոսկումէն յետոյ,
Ապա մենք ենք անոր բնակիչները, որ գիտցանք լալ ու արիւնիլ այդ երրորդութեան համար։

Իսկ դու, ով թշուառական, ով ռամիկ ու արգահատելի մահկանացու,
Դու, որ քո արքայական բեհեզներուդ, մետաքսներուդ ու թաւիշներուդ մէջ ամէն գիշեր,
Վիրաւոր թիապարտի մը շղթաներուն մէջ քաշած մոռացութեան մրափին կը նախանձիս,
Դու մեռած ես քու կենդանութեան օրերուդ մէջ անգամ, եւ ամէն օր կը մեռնիս...

Դու կիսամեռ էիր այն օրէն երբ անդրանիկ նահատակներու ստուերները եկան մահիճդ շրջանելու,
Երբ ոճրապալատիդ հիմքերը սասանեցան հզօր արցունքի անիծահեղ մրրիկներէն,
Ու երբ բովանդակ աշխարհի նզովքը եկաւ աթոռելու այլանդակ ճակտիդ գազանական,
Իսկ դու վերջնականապէս մեռար, երբ քայլերուդ առաջ հային պատասխանը երկաթներուն մէջէն որոտաց...

Ինչպէս որ մեռանք անտրտունջ անցեալին մէջ, պատրաստ ենք մեռնիլ այսօր ալ ընդհարումի մահով,
Չի մեր գերեզմանները արգանդներն են բիւրածին ու մեր պատանքները՝ խանձարուրները նոր զինուորութեան.
Եւ եթէ գայ օր մը երբ ըմբոստութեան դիրքերու վրայ բոլոր լեզուները լռեն ու բոլոր բազուկները քարանան,
Գիտցի՛ր, գաղափարը հողերէն դարձեալ քեզի դէմ մաքառումի բանակներ պիտի հանէ անպարտելի...

Արդէն մեր առնական դիմագրաւումը տարասարսափ մահերուն ու մեր հոգեւարքները երջանկախաղաղ,
Մեր տոկունութիւնը պողպատեայ, մեր հաւատքը մոլեռանդ ու մեր համբերութիւնը գերմարդկային
Սկսեր են իմաստացնել ոճրազործ ու մարդասպան սերունդիդ միտքերը խաւարչտին,
Ու արդէն պարիսպներուդ հասան արիւնի մեծ ցորեկներու հաշուեմռունչի թոթովանքները նախնական։

Եւ այլևս երկար չի պիտի տևէ որ երէկի ու այսօրի մեր մարդասպանները
Մոլեռանդօրէն մեր ետևէն պիտի քալեն, որպէս ուխտաւորներ նոր մարգարէի ետևէն,
Պիտի քալեն անհանգիստ իրենց խիղճէն չարչրկուած, բորբոքներու վոհմակի մը պէս անունդ ոռնալով.
Պիտի քալեն դէպի քեզ, դէպի շառաւիղդ, դէպի գաղ արիւնաշաղախ...

Եւ դարձեալ մե՛նք ենք որ պիտի յաղթանակենք և շարունակենք տևել դարերուն հետ,
Եւ ի՞նչ փոյթ թէ չը պիտի տեսնենք այդ օրը, երբ մեր հոգիին մէջ գայն կապրինք արդէն,
Իսկ դու, դու անթիւ ոճիրներուդ տակ կքած՝ պիտի զրկիս անգամ հողի գթութենէն,
Փողոցին մէջ պիտի սատկիս կատուի մը նման, և բուռ մը հող պիտի կազմես մեր ներքաններուն տակ։

ՎՏԱՐԱՆԴԻ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Ֆրանսական „Մարդկային Իրաւունքների Լիգայի“ տարեկան համագումարի բացման առթիւ, որ տեղի ունեցաւ Բորդոյում, „Դրօշակի“ խմբագրութիւնը հեռագրեց հետեւեալը.

„Յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, որուն կ՚ողջունենք „ձեր Կոնգրէսն։ Այս առթիւ կը յայտնենք միանգամ ևս մեր „ակնկալութիւնները Ֆրանսայէն և կը սիրենք յուսալ որ „Մարդկային Իրաւունքներու յայտարարութեան սիրելի „հայրենիքի մէջ պիտի բարձրացնէք ձեր ձայները համիդեան „ոճիրների և պաշտօնական Եւրոպայի մեղակցութեան դէմ, „որ՝ հակառակ պաշտօնական դաշնագրերու և հանդիսաւոր „խոստումներու, դեռ կը շարունակէ ամբողջ ժողովուրդ մը „ձգել անժամանակակից և բարբարոս բէժիմի մը տակ, որ „ամօթն է եւրոպական քաղաքակրթութեան և ժամանակից „մարդկութեան“։

Այդ հեռագրի ընթերցումից յետոյ, Լիգայի նախագահ Պրեսանսէ պատասխանեց ժողովին՝ համակրանք յայտնել Հ. Յ. Դաշնակցութեան, որը և ընդունեց սիրով։

—

Թիւրք կառավարութեան դէմ մղուած շարժումները գնալով զօրեղանում են Եմենում։ Մահմուդ և Եահեա ապստամբապետները հրաւիրում են բոլոր տեղացիներին զէնքի դիմել, սպառնալով մահւան պատիժ այն ամենքին, որ համարձակւի ուտեստ ծախել թիւրք զօրքերին կամ որևէ կերպ նպաստել նրանց։ Ֆէյզի փաշան յուսահատ դրութեան մէջ՝ զուր դիմումներ է անում Պոլիս, իր կրիտիքական դրութիւնը հասկացնելու։ Օգնութիւն կամ ուտեստ հասցնել անկարելի է դարձել, ճանապարհները ապստամբների ձեռքն անցած լինելու պատճառով։ Թիւրք բանակը սովի է ենթակայ։

Մեզ հաղորդում են տեղեակ աղբիւրներից, որ Նորերս Պետերբուրգ է ուղարկուած Կովկասեան փոխարքայից մի գաղտնի գեկուցագիր, ուղղած Նիկոլայ կայսրին, կովկասեան ազգերի տրամադրութեան և քաղաքական կուսակցութիւնների գործելակերպի վերաբերմամբ։ Մենք յոյս ունինք հրապարակ բերել այդ զեկուցագրի մի քանի կարեւոր կէտերը։

—

Հին-Նախիջևանի և Գուրիայի արիւնոտ դէպքերի ոճրագործ-հեղինակ գեներալ Ալիխանով, որը մինչև այժմ ազատ էր մնացել անհրաժեշտ հատուցումից, ստացաւ արժանաւոր պատիժը—յեղափոխական ռումբը նրան ուղարկեց Ալեքսանդրապոլում։ Ցարի կառավարութիւնը 5000 ռուբլի է առաջարկում այն անարդ մարդասպանի, որ ահաբեկիչների հետքը ցոյց կը տայ։

—

Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը յանձնարարել է Կովկասեան մեր Պարմիններին՝ 100 հազար ֆրանկի դրամական օգնութիւն հասցնել Թիւրքաց-Հայաստանի սովատանջ վայրերին։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՑ

ՏԵՐՐՕՐ

Հայ հասարակութեան ծանօթ է արդէն, որ կարգ մը խաչագողներ վերջերս «ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ» մը կազմակերպեր էին, անխղճօրէն շահագործելու համար տանկահայ դատը՝ իրենց անձնական գծուած հաշիւներուն համար։

Հ. Յ. Դաշնակցութեան Զորրորդ Ընդհանուր Ժողովը մանրամասնօրէն քննելէ ետք այդ չարագործ խմբին գործունէութիւնը, որոշեց խստօրէն արտաքսել Դաշնակցութենէն Միհրանը և ասոր գործակից անդամները, ինչպէս արդէն յայտարարուած է այդ մասին «Դրօշակի» մայիսի համարով։

Միևնոյն ատեն, Ընդհանուր Ժողովը որոշած էր կարգապահական պատիժներու ենթարկել տալ յանցաւորները, յանձնելով այդ խնդիրը Դաշնակցութեան Կովկասեան Ահաբեկիչ Մարմնին։

Արդ, Ընդհանուր Ժողովին այդ որոշման համաձայն՝ Ահաբեկիչ Մարմինն ձեռնարկեց գործի և կուգայ ծանուցանել հասարակութեան, որ յունիսի 1-ին Արմաւիրի մէջ տէրրորի ենթարկել տաւ Միհրանը (որ գնացած էր այնտեղ բռնի միջոցներով դրամ շորթելու տեղացիներէն) և ասոր հետ գտնուող կոփեցի Խէչօն և ոմն Վարդապետեան։ Այսօր ալ Թիֆլիզի մէջ տէրրորի յանձնուեցաւ ղազախեցի Վասիլ անունով խաչագողը, անդամ նոյն խմբակին։

Այս ամենը յայտնելով իգիտութիւն, Ահաբեկիչ Մարմինը կը փութայ յայտարարել, որ խստիւ արգելուած է համակրանքի ոևէ ցոյց ընել դատապարտեալներու յուղարկաւորութեան առթիւ. միմիայն ծխատէր քահանան կ'արտօնուի եկեղեցական արարողութիւն կատարելու։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Սրանով յայտնում ենք ի գիտութիւն հայ հասարակութեան, որ «Ապառաժ» Կ. կոմիտէի որոշմամբ, Դիզակում, զանազան ժամանակներում մատնութիւնների և կազմակերպական զէնք իւրացնելու համար տէրրորի են ենթարկուել՝ Առաքել գիւղացի՝ Առստամ Զէտկանց, Թաղասէր գիւղացի՝ Աբրահամը, Թաղոտ գիւղացի՝ Միքայէլ Ղազարեանը և ինքնապաշտպանութեան նախկին զինուոր՝ Ասլանիկ։ Զգուշացնում ենք յիշեալ անձնաւորութիւնների ազգականներին և բարեկամներին չը վերագրել այդ սպանութիւնները մասնաւոր մարդկանց։

Հ. Յ. Դ.
„ԱՊԱՌԱԺ" Կ. ԿՕՄԻՏԷ

ԾՐԱԲԵՐԱԿԱՆ

Ընկերներ!

Ի նկատի ունենալով, որ ներկայումս կան այնպիսի կուսակցութիւններ և խմբակցութիւններ, որոնք զաւառներում դուրս չեն գալիս իրենց իսկական անուններով և շատ դէպքերում, առանց քաշուելու, շահագործում են Հ. Յ. Դաշնակցութեան անունը, ուստի «Ապառաժի» Կ. կոմիտէն սրանով յայտնում է իր շրջանի բոլոր մարմիններին, որ ընկեր գործիչներին և բոլոր դաշնակցականներին,

1) *Բոլոր նրանք, ովքեր զաւառներում գործում են և պրոպագանդ են մղում Դաշնակցութեան անունից, պարտաւոր են ներկայացնել Կ. կոմիտէի պաշտօնական բլանկի վրայ գրած և «Ապառաժի» Կ. կոմիտէի կնիքով վաւերացրած վկայական, որի մէջ ընդգծուած կը լինի նրանց միսսիան.*

2) *Հակառակ դէպքում, եթէ կը գտնուին այնպիսիները, որոնք առանց վերև յիշած վկայականի՝ զաւառներում պաշտօնապէս կը գործեն, կը խօսին Դաշնակցութեան անունից, շահագործելու համար այդ անունը, չընդունելով նրանց իբրև դաշնակցականներ, անհատապէս պատասխանատու ճանաչել նրանց՝ կատարած գործերի համար և վարուել նրանց հետ կազմակերպութեան կանոնների համաձայն։*

Հ. Յ. Դ. „ԱՊԱՌԱԺ" Կ. ԿՕՄԻՏԷ

ՆԻՒԹԱՏԻՊԻՆ

Արեւմտեան Թիւրօն ստացած է,

Ռուսաստան.—„Դրամ" կոմիտէն 20029 ֆրանկ եւ 60 սանթ.
Ամերիկա.—Կ. կոմիտէն 52523 ֆր. 55 սանթ.:
Ֆրանսիա.—Պարիզ՝ Վ. Բ.-էն 40 ֆր.:
Աւստրիա.—Բօնսբերգ՝ Ս. Գալ.էն 20 ֆր.:
Ռումանիա.—Պիքէշի՝ Աւոր-Դաշտ խմբէն 40 ֆր.:
Ամերիկա.—Պրովիդենսի կոմիտէն՝ ի նպաստ „Դրօշակի" եւ „Պրօ-Արմենիայի" 669 ֆր. եւ 15 սանթ.:
Գումար 73322 ֆր. եւ 30 սանթ.:

Պոլսեցեան Գեղար. Կոմիտէ՝

ՍԼԻՎԼԻՆԻ ԵՆԹ ԿՕՄԻՏԷ.—1906 Յունուար, փեբրուար մարտ ամիսներու հաշիւ: Հայ հասարակութիւնէն հանգանակուած՝ 117 լէվ, հետեւեալ խումբերից. Քրիստափոր 11. 90, Վասպուրական 18. 25, Անդրանիկ 3. 40, Եամպօլի Կայծակ 29, Սբրալեցի Սերոբ-Աղբիւր 37, Սբրալեցի Արաբօ 9.90, Բասնէ մանալէ Ազաս 53.10, Դրախտ 26, Գարաբուլուարի Պեսօ-Պուլկարացի 54, Հրայր 30: 1906 Ապրիլ, մայիս, Յունիս ամիսներուն՝ Սլիվլէնի Վասպուրական 15. 5, Քրիստափոր 16. 30, Եամպօլի Կայծակ 28, Գարաբուլուարի Հրայր 30, Սբրալեցի Սերոբ-Աղբիւր 22. 50, Բասնէ Մանալէի Դրախտ 22. 50, Բասնէ Մանալէի Ազաս 51. 80, Գարաբուլուարի Պեսօ 54: 1906 Յուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներուն՝ Սլիվլէնի Վասպուրական 13. 40, Անդրանիկ 17, Քրիստափոր 19. 20, Սէրէմնեան 13. 60, Եամպօլի Կայծակ 28, Սբրալեցի Սերոբ-Աղբիւր 22. 70, Բասնէ Մանալէի Ազաս 51. 80, Դրախտ 22. 50, Գարաբուլուարի Պեսօ 40 20, Նէէրմեր Սբրալեցի Արշակ Սերոբեանէ 5, Բասնէ-Մանալէէն Մարտիրոս Տօնիկեանէ 2, Աւետիս Տօնիկեանէ 1, Գարնապաս Ս. Ա. 5, Սլիվլէնի ընկերական խնայողէն բանտարկեալներու օգտին 24:
Գումար՝ 895. 10 լէվ:

ՊՐԱՅԼԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ.—1907 հաշիւ տնտարանի հասոյթ՝ 1000 ֆր. վանտուած գրքերէ՝ 22 ֆր:

ԴԱՆՈՒԲ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ.—Ընթերցարանի հասոյթ 306. 25, Տիկ. Կարմիր Խաչի զանձանակէն՝ 110, հետեւեալ խմբերից. Կարին 21, Սերոբ-Աղբիւր 24, Արարատ 28, Նոր Դար 51, Նէմրուբ 20, Թէսալի 24, Զինուոր 15, Արամ 9, Վարագ 33, Տարօն 15, Հազուլ 25, Սեպուհ 18, Գայլ 9, Տիկնանց Արաքս 24, Տղաս 15, Նոր Դար խ. անդամ Տ. Է. տուգանքներ՝ 33. 70, ծախսած գրքերէ՝ 37- 50. Գր. Մանուկ. 5, Թ. Մկր. 5, Սարգիս Աւետիս 2, Մաս. Սիմօն 5, Վար. Օհանն. 5, Աւետիս Աբր. 5, Սարգիս Գասպ. 10, Մուրատ Խոսս. 5, Խեպօ Խ. 15, Գր. Զակ. 5, Յակոբ Մխիթար 1, Յովհ. Մուրատ 5, Նիկողոս 5, Խաչօ Պեսրոս 2, Յակոբ Օհանէս 2, Մկր Կարապետ 2, Պողոս Մուրատ 5, Նիկողոս Խաչիկ 5, Կարապետ Խոսս. 5, Յակոբ Սահակ 5, Սարգիս Մարտիրոս 4, Վարդան Ամիր 2, Ղազար Մուրատ 3, Մանուկ Յակոբ 20, Պողոս Խոսդիչ 4, Յովսէփ Մուրադ 2, Գր. Կարապետ 2, Խոսդիչ Յակոբ 5, Յովհ. Խաչիկ 5, Աբր. Խոսդիչ 4, Մարտիրոս Սէֆէր 5, Յովհ. Մխտուս 5, Սողոմոն Տէր Սարգիս 5, Յակոբ Մուրատ 5, Գէորգ Վարդան 5, Աւետիս Սահակ 2, Աւետիս Ասատուր 5, Օհանէս Գալուստ 5, Օհանէս Յովսէփ 4, Ղազար Պողոս 5, Յովսէփ Խոսդիչ 5, Աւետիս մարտ. 5, Մուրատ Յովհաննէս 5. Ստեփան մարտ. 5, Աւետիս Սահակ 3, Դաւիթ Յակոբ 20, Խոսդիչ Նիկողոս 25, Յարութիւն Խոսդիչ 2, Լեւոն Տէր Սարգիս 4, Խեպօ Բարսեղ 5, Մարտիրոս Սարգիս 5, Գր. Գալուստ 5, Մանուկ Տէր Մանուէլ 6, Մանուկ Մուրատ 3, Գէորգ Յակոբ 1. Պողոս Յովհաննէս 5, Սերոբ Տէր Խաչօ 5, Ասլօ Խլօ 4, Ստեփան Կարապետ 5, Եղօ 2, Ալէքսան Խոսդիչ 5, Եղօ Պուշար 5, Պեսրոս Շիրվանցի 2, Կարապետ Պողոս 5, Ղազար Զաբար 3, Ստեփան Խեպօ 2, Կարապետ Մանուկ 2, Սարգիս Մանուկ 2, Աւետիս Յովհաննէս 2, Գր. Խոսդիչ 2, Սողոմոն Օհանէս 2, Սարգիս Բարսեղ 5, Հավարանում Օհանէս 5, գումար 1175. 45:

ՎԱՌՆԱՅԻ ԿՕՄԻՏԷԷՆ.—1906 նոյեմբերէն 1907 փեբր. հետեւեալ խումբերէն՝ Զինուոր Աղբիւր 50. 50, Զինուոր Աղբիւր Յակոբէն 2, Յառաջդիմական 20, Արաքս 27, Վրէժ 15, Հրայր 30, Փոքորիկ 25, Շուտաս 27, Մարտիկ 25, խումբերէ հանգանակած 35, Կաղանդի տօնածառէն հասոյթ 124. 30, „Դրօշակի" բաժնեգիրէ 12. գումար 392. 80:

ԲՈՆՊԱՆՑԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ բանտարկեալներու օգտին 100 ֆր.

ՍՕՖԻՅԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ երգեցիկ խումբի հերկայացումէն՝ բանտարկեալներու օգտին 164 ֆր.,

ՖԻԼԻՊԷԻ ԿՕՄԻՏԷԷՆ.—Ֆիլիպէի կանանց խումբերու զէնքի հաւէն 6 լէվ. Կարմիր Խաչի ա. տասնեակ 21, բ. տասնեակ 13. 50, եւս 16. 50, եւս 13. 50, գ. տասնեակ 10. 50, եւս 12, հետեւեալ խումբերից Սոսի-Այծեամ 13. 50, Հեթում-Գազիկ 42, Բաբկէն-Սիւնի 35, Արամեան 62, Վասպուրական 34, Վազգէն 73, Արիստակէս Զօրեանց 32, Հրայր 36, Տարօն 18, Վրէժի բ. տասնեակ 108, Քրիստափոր Միքայէլեան 21, Դայանցի Անձնուրաց 48, նէէր Միհրան Եղիազարեանէ 100, նէէր Թագուհի 20. ֆանի մը ընկերներէ 5, Արարատ տնտարանի զանձանակէն դեկտ. ամսէն 56. 25, յունուար 24. 50, փեբր. մարտ 21, պնակներէ 13. 65, գրքերէ եւ պատկերներէ 47. 10, „Դրօշակի" բաժնեգիններէ 108, Դայանցի հանգանակութիւնէն Տօնիկ Մխիթարեան 15. Կարապետ Միհասեան 10. Խաս գիւղի հանգանակութիւնէն թիւ 19370՝ 5, 19371՝ 5, 19382՝ 10, 10373՝ 10, 19374՝ 5, 19057՝ 5, 19058՝ 3, 19059՝ 3, 19060՝ 10, 19061՝ 2, 19062՝ 3. 19063՝ 3, 19064՝ 10, 19065՝ 10, 19066՝ 2, 19067՝ 1, 19068՝ 5, 19069՝ 2, 19070՝ 1, Շարունակութիւն Ֆիլիպէի հանգանակութեան 19422՝ 500, 19411՝ 200, 19412՝ 100, 19420՝ 100, 19415՝ 80, խաչիկէն՝ 60, 19414՝ 40, 19409՝ 20, 19413՝ 20, 19416՝ 20, 19419՝ 20. 19115՝ 20, 18938՝ 20, 18950՝ 5, Ասոդիկից՝ 5, 19410՝ 7,: Գումար 2349:

Ընդհանուր գումար 6098, 35 լէվ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Գր. ս.
1.	**Ապատամբական ոգի** (սպառուած)	.10
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառ.)	.05
3.	**Դաղտնի տպարան** (սպառ.)	.05
4.	**Դիտական սոցիոլոգիա. Ֆ. ԷՆԳԵԼՍ** (սպառ.)	.40
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր.** (Գ. տպագր.)	—
6.	**Կուկունեան խմբի արշաւանքը.** (սպառ.)	.20
7.	**Կարնոյ յիշատակին** (*Զորս հատուած*) „	.50
8.	**Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնք**	—
9.	**Գրիչներ,** Homo homini lupus, **ՎԱՐԴԳԷՍ** (սպառ.)	.20
10.	**Երիտասարդներին. Պ. ԿՐԱՊՈՏԿԻՆ.** (սպառ.)	.20
11.	**Ապառութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Ա.** (սպառ.)	.30
12.	„ „ „ **Բ.** „	.60
13.	**Ամբոխային տրամաբանութիւն. ԷԼԼԷՆԻ.** (սպառ.)	.50
14.	**Ապառութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Գ.** „	.30
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա.**	.50
16.	**Կովկասեան վէրքեր. Է. ԱԿՆՈՒՆԻ.** (սպառուած)	3.—
17.	**Հայրենիքի զոհասիրը. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ** (սպառ.)	1.—
18.	**Կազմակերպական կանոններ.** (Բ. տպագր.)	—
19.	**Դէպի կռիւ. Է. ԱԿՆՈՒՆԻ.** (սպառուած)	2.—
20.	**Յեղափոխականներ. Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ** (սպառ.)	.20
21.	**Նախագիծ Կովկասեան զարծուցէութեան.** (Բ. տպ.)	—
22.	Подвиги царизма. В. Араратскій.	.50
23.	**Les tueries de Bakou,** A. ARAZI	.20
24.	**Յեղափոխական դատ.**	.20
25.	**Հ. Յ. Դ. երրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնք.**	—
26.	**Կոչ Մահմէտականներին** (թուրքերէն)	.10
27.	**Les Plaies du Caucase,** E. AKNOUNI	2.—
28.	**Ապառութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Դ.** գրոյկ.	.40
29.	**Մեծ մարդասպանի դէմ** (Դատավարութիւն)	.50
30.	**Վիսոցի բազէն. ՎՏԱՐԱՆԴԻ.**	.50
31.	**Յեղափոխական մտքեր. ԲՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**	1.—
32.	**Հայորդիներ. ՍԻՄԱՆԹՕ.**	.50
33.	**Սասուն-Մուշի կռիւներ**	.50
34.	**Հայկական տանջանքներ եւ Եւրոպան. ԲԵՐՆՇՏԱՅՆ**	.50
35.	**Մարտական հրահանգներ. ԱՆԴՐԱՆԻԿ.**	1.—
36.	**Միացէ՛ք,** կոչ Թիւրքիայի բոլոր ազգերին (թուրքերէն)	.10
37.	**Թիւրքական բանտերը. ՄԱՐ.**	.25
38.	**Քաղաքական կուսակցութիւններ Ռուսաստանում**	.50
39.	**Հայաստանը եւ Եւրոպան. Դ. ԲՐԱՆԴԷՍ.**	.20
40.	**Սպքիւր-Սերոբ** (Կենսագրական). **Ս. Մ.**	.25
41.	**Եւրոպացիներու կարծիքը**	.30
42.	**Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան**	—

ՄԵԾԱԳԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ — ալբոմ — հատը 1 ֆր.

ԿՈՉԱԿԱՅԻՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ (ֆրանս. ծանօթութեամբ) — 50 ս.

Սերոբի, Սերոբի և որդոց, Հրայրի, Վահանի, Թորգոմի, Խանի, Քրիստափորի, Կայծակի, Պետոյի, Կարօի, Բաբկէնի։

Հատը 50 սանտիմ, իսկ սէրիան (13 հատը) 5 ֆր.

Դիմել՝ «Դրօշակի» խմբագրութեան, Ժընեվ։

„ՅԱՌԱՋԻ“ ԳՐԱԴԱՐԱՆ

		Բ. Կ.
1)	ՀԱՐՈՒՍՑՆԵՐ ԵՒ ԱՂՔԱՏՆԵՐ, *Բաֆ,*	— 15
2)	ՀԱՑ, ԼՈՑՍ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, *Պէշեխօնով.*	— 12
3)	ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՓՈՂԵՐԸ, *Ս. Ֆէօդորովի*	— 5
4)	ՆՈՐ ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ, *Կարմելիւկ*	— 2
5)	ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԲԱՆՒՈՐԸ, *Շերնով.*	— 15
6)	ԱԶԳԱՑԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ, *Պերնեատօրֆեր*	— 5
7)	ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ, *Պրամպօլինի*	— 5
8)	ԱՐՀԵՍՏԱԿ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ, *Ե. Թոփչեան*	— 15
9)	ԻՆՉ Է ԻՐԱՒԱԿ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ, *Նովոտորժսկի.*	— 15
10)	ՀՈՂԱՑԻՆ ՀԱՐՑԸ ՆՈՐ-ԶԵԼԱՆԴԻԱՅՈՒՄ, *Կաբանով*	— 3
11)	ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՅ ԳՐԱՒՈՒՄԸ, *Ժան Ժորէս*	— 5
12)	ԴԵՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ, *Ա. Աբեղեանի.*	— 12
13)	ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ, *Կարլ Կաուցկի.*	— 3
14)	ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ, *Ա. Ահարոնեանի* (Գլուխք)	— 80
15)	ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, *Ֆ. Լասալ*	— 5
16)	ԻՆՉՊԻՍ ՊԷՏՔ Է ԼՈՒԾԵԼ ՀՈՂԱՑԻՆ ՀԱՐՑԸ, *Ա. Ն.*	— 12
17)	ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, *Վ. Գօլուբեվ*	— 2
18)	ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿ. ԳԻՒՂԱՑԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, *Ս. Զաւարեանի.*	— 25
19)	ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՇՆԱԿ. ԶԻՒՑԵՐԱՑՈՒՄ, *Աշխէն Դիւնան*	— 20
20)	ՈՎ ԻՆՉՈՎ Է ԱՊՐՈՒՄ, *Դիկշուէյն*	— 7
21)	ՄԻ ԶՐՈՅՑ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ *Ն. Լ.*	— 5
22)	ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԸ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ *Լ. Շիշկո*	— 7
23)	ԿՕՕՊԵՐԱՑԻԱ, *Ա. Նիկոլաեվ.*	— 15
24)	ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏԻԵԼ ՁԵՐ ԻՐԱՒՈՒՆՔԻՑ	— —
25)	„ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ“, *Լ. Պետրով*	— 20
26)	ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ, *Ս. Վշչոսկի*	— 12
27)	ԳԻՒՂԱՑ. ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ, *Ս. Ան.-սկի*	— 7
28)	„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ“, *Միք. Յովհաննիսեան.*	— 50
29)	„ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ“, *Ժ. Գէդ. և Պ. Լաֆարգ*	— 5
30)	„ԳՕՐԾԵԱՆ ՀԱՆԳՈՅՑԸ“ — (*Թիւրքահայոց հարցի վերջին շրջանը*), *Մ. Յովհաննիսեան.*	— 20
31)	ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒԻ ԹԷՕՐԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ, *Շերնով.*	— 10
32)	ԻՆՊԻՍԻ ԿԱՐԳԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ, *Նեկրասով*	— 10
33)	ՎՆԱՍԱԿԱՐԸ, *Արամայիս*	— 4